

Վերլուծական Հաշվետվություն

ՀՀ Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և ՀՀ 2011թ. Տարեկան բյուջեի օրենքի նախագծի համապատասխանության վերաբերյալ

Աշոտ Խուրշուդյան, տ.գ.թ.,

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն,
Կրթության և վերապատրաստման բաժնի ղեկավար

Պարույր Ամիրջանյան

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն,
Ծրագրերի ներդրման և իրականացման բաժնի ղեկավար

Սույն հաշվետվությունը նպատակաուղղված է ուսումնասիրել ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված ծրագրերի, դրանցով հոշակված նպատակների և նախանշված ֆինանսական ու ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշների համապատասխանությունը Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության փաստաթղթով ամրագրված դրույթների հետ: Սույն հաշվետվությունը ՀՀ Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության, դրա նպատակների և դրանից բխող քաղաքականության միջոցառումների ուսումնասիրության և վերլուծության նպատակ չի հետապնդում:

Հեղինակները հատուկ շնորհակալություն են հայտնում Սուրեն Պողոսյանին՝ վերլուծության ընթացքում ցուցաբերած օժանդակության համար

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	3
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ	5
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	5
Գերակայություն 1. Անհրաժեշտ տեղեկատվության ապահովում	5
Գերակայություն 2. Ծնելիության մակարդակի բարձրացում	6
Գերակայություն 3. Մահացության մակարդակի նվազեցում	8
Գերակայություն 4. Բնակչության առողջության պահպանում և բարելավում	9
Գերակայություն 5. Միգրացիոն գործընթացների կարգավորում	12
Գերակայություն 6. Տարածքների զարգացում և բնակչության տարածքային բաշխվածության անհամամասնության մեղմացում	13
Գերակայություն 7. Հոգևոր (ոչ նյութական) մշակութային արժեքների պահպանություն և պաշտպանություն	18
ԲԱՅԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	22
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	26
Հավելված Ա. ՄԺԾԾ-Բյուջե ստանդարտ ժամանակացույց	27
Հավելված Բ. Նոր նախաձեռնությունների ներկայացման ամփոփ ձև	28
Հավելված Գ. ՀՀ Ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2010թ. պետական ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկ և 2011թ. պետական բյուջեի համապատասխանության ներկայացում	29
Հավելված Դ. ՀՀ առողջապահության բնագավառի 2009-2011 թթ. ծախսերի համեմատությունը	38

Ներածություն

2009թ. հուլիսի 2-ին ՀՀ կառավարության կողմից հավանություն տրվեց ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությանը (այսուհետ՝ ԺՔՌ), որի հիման վրա նույն 2009թ. դեկտեմբերի 24-ին հավանություն տրվեց նաև 2010թ. պետական ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին: Մինչև նույն ժամանակ, 2010թ. ընթացքում տեղի են ունեցել բյուջետային քննարկումներ և որոշումներ են կայացվել 2011թ. բյուջեի նախագծի մշակման ուղղությամբ: 2010թ. առաջին կեսի ընթացքում մշակվել և Ազգային ժողովին է տրամադրվել ՀՀ կառավարության կողմից մշակված Միջին ժամկետ ծախսերի ծրագիրը (ՄԺԾԾ), որ զետեղված են եղել 2011-2013 ժամանակահատվածի համար առավել կարևոր գերակայությունները, այդ ժամանակահատվածում կիրառվելիք ֆիսկալ սկզբունքները, բյուջետային ցուցանիշները և ոլորտային ֆինանսական սահմանաչափերը/վերին սահմանները: 2010թ. հոկտեմբերին Ազգային ժողով է ներկայացվել նաև 2011թ. տարեկան բյուջեի օրենքի նախագիծը և սույն հաշվետվության մշակման ժամանակ այն դեռ գտնվում է բյուջետային քննարկումների փուլում:

Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարություն

Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը մանրամասնորեն ներկայացնում է Հայաստանում ժողովրդագրական զարգացման իրավիճակն ու միտումները, արձանագրում է դրանց ոչ բարենպաստ լինելու փաստը և խնդրի հրատապության աստիճանը: Ռազմավարությունում զետեղված է տեղեկատվություն բնակչության թվաքանակի և կառուցվածքի մասին, ինչպես նաև շարադրվում են միտումների վրա ազդող գործոնները և ներկայիս մարտահրավերները:

Ռազմավարության երկրորդ մասում ներկայացվում են ռազմավարական նպատակները, առաջնայնություններն ու միտումները: Ընդհանուր առմամբ, ռազմավարությունը վերլուծական-նկարագրողական բնույթ է կրում և ուղղորդում է ռազմավարական որոշումները, սակայն ռազմավարական նպատակների քանակական բնութագրման մակարդակը չափազանց ցածր է: Թեև ռազմավարությունը (ինչպես նաև դրանից բխող տարեկան միջոցառումների ցանկը) համահունչ են Կայուն Զարգացման Ծրագրի հետ, այնուամենայնիվ, ԺՔՌ-ից ուղղակիորեն չեն բխում ռազմավարական և ծրագրային միջնաժամկետ և հեռահար քանակային նպատակակետերը ու ցուցանիշները: Ի տարբերություն նշվածի, բյուջետային համակարգը և որոշումների կայացման մեխանիզմները սովորաբար ավելի սերտ են փոխկապակցվում քանակապես հստակ արտահայտված միջնաժամկետ և հեռահար թիրախների հետ, օրինակ Կայուն Զարգացման Ծրագրի և Միջին ժամկետ Ծախսերի Ծրագրի փոխկապակցվածության աստիճանը: Փոխարենը, ԺՔՌ-ում մանրամասնորեն ներկայացված է մոնիտորինգի և վերլուծության համար անհրաժեշտ ցուցանիշների ցանկը (ոչ թե ցուցանիշների քանակական թիրախները):

Այնուամենայնիվ, ռազմավարության կյանքի կոչման գործիք է ԺՔՌ-ից բխող 2010թ. տարեկան ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը, որը և

հանդիսացել է սույն հաշվետվության ուսումնասիրության օբյեկտը՝ 2011թ. բյուջեի նախագծի հետ համատեղ:

Տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը նույնպես պարունակում են ժողովրդագրական իրավիճակի, հիմնական խնդիրներ ու ակնկալվող արդյունքների մասեր: Բացի դրանից, միջոցառումները խմբավորված են ըստ գերակայությունների, որոնք ներկայացված են ստորև.

1. անհրաժեշտ տեղեկատվության ապահովում
2. ծնելիության մակարդակի բարձրացում.
3. մահացության մակարդակի նվազեցում
4. բնակչության առողջության պահպանում և բարելավում.
5. միգրացիոն գործընթացների կարգավորում
6. տարածքների զարգացում և բնակչության տարածքային բաշխվածության անհամասնության մեղմացում
7. հոգևոր (ոչ նյութական) մշակութային արժեքների պահպանություն և պաշտպանություն

Կառավարության բյուջետային պլանավորման շրջանակը

ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքով ամրագրվում է բյուջետային որոշումների կայացման համակարգի սկզբունքները, համաձայն որոնց գործընթացը բաժանված է երկու հիմնական փուլերի՝ ռազմավարական և մանրակրկիտ բյուջետավորման: Համաձայն նշվածի, հիմնական բյուջետային որոշումները յուրաքանչյուր բյուջետային ցիկլի ընթացքում կայացվում են ռազմավարական փուլի ընթացքում՝ եռամյա զարգացման համատեքստում: Հավելված Ա-ում ներկայացված է բյուջետային ժամանակացույցի հիմնական կետերը և ժամկետները:

Ընդհանուր առմամբ, ռազմավարական պլանավորման և ոլորտային քաղաքականության որոշման հարցերը մեր երկրում բավարար աստիճանի կարգավորված ու համակարգված չեն: Հաճախակի են դեպքերը, երբ պետական մարմինները մշակում են առանձին ոլորտների նպատակների և միջոցառումների վերաբերյալ փաստաթղթեր, որոնք, այնուհետև, հավանության են արժանանում վերադաս մարմինների (օրինակ՝ ՀՀ կառավարության) կողմից: Սակայն, նման փաստաթղթերի ֆիսկալ հետևանքների գնահատականները կրում են ընդհանրական բնույթ և չեն կարող ավտոմատ կերպ ներառվել բյուջետային համակարգում: Նշված ռիսկերը մեղմելու նպատակով Հայաստանում ներդրված է միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման համակարգը, որը միասնական կերպով է դիտարկում ոլորտային քաղաքականությունները և համապատասխան բյուջետային հատկացումները՝ միմյանց փոխկապակցված:

Այդ իսկ պատճառով էլ խիստ կարևոր է ցանկացած ռազմավարական բնույթի որոշում ներկայացնել և ամրագրել միջնաժամկետ ծախսերի ծրագրով՝ դրանով իսկ հեշտացնելով բյուջետային բավարար հատկացումների վերաբերյալ որոշումների կայացումը: Հաշվի առնելով նաև, որ Հայաստանը անցում է կատարում դեպի ծրագրային բյուջետավորում, բոլոր միջնաժամկետ ծախսերի հայտերը անհրաժեշտ է ներկայացնել ոչ միայն կարիքների նկարագրմամբ, այլև հստակ ծրագրային տրամաբանությամբ, որը կպարունակի համապատասխան արդյունքների նկարագրություն և ցուցանիշների ներկայացում:

Համապատասխանության վերլուծություն

Գերակայություն 1. Անհրաժեշտ տեղեկատվության ապահովում

Առաջին գերակայության շրջանակներում ներկայացված միջոցառումների պլանավորումը հիմնականում պայմանավորված է համապատասխան գերատեսչություններում համապատասխան ծրագրերի պլանավորման, իրականացման, կատարողական ցուցանիշների, ազդեցության գնահատականի և համանման այլ աշխատանքների իրականացմամբ: Այդ աշխատանքների իրականացումը պայմանավորված է գերատեսչությունների աշխատանքային ծրագրերի պլանավորմամբ (performance plans) և այդ աստիճանի տեղեկատվությունը չի հանդիսանում բյուջետային տեղեկատվության մաս: Այդ իսկ պատճառով, առա-

ջին գերակայության միջոցառումների բյուջետային վերլուծությունը չի հանդիսանում սույն հաշվետվության մաս:

Գերակայություն 2. Ծնելիության մակարդակի բարձրացում

Առավել ուղղակիորեն ծնելիության մակարդակի բարձրացման վրա ազդում են սոցիալ-տնտեսական, մշակութային և առողջապահական ծրագրերը: Դրանց թվում են.

- Աղքատության դեմ ուղղված ծրագրերը
- Զբաղվածության ծրագրերը
- Երեխաների խնամքի և ծննդյան հետ կապված նպաստները և աջակցության ծրագրերը
- Բնակարանային պայմանների բարելավման ծրագրերը
- Ընտանիքի պլանավորման և հոգևոր-մշակութային ծրագրերը

Ներկայումս պետական բյուջեով վերոնշյալ ծրագրերի գծով 2011թ. բյուջեի նախագծում ամրագրված են հետևյալ դրույթները.

Երեխայի ծննդյան և խնամքի նպաստներ

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումներից երկուսը առավել կապակցված են ԺՔՌ 2-րդ գերակայության հետ

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ

Նշված միջոցառման գծով պետական բյուջեի նախագծում 2010թ. պլանի նկատմամբ նախատեսված է 34%-ոց աճ, սակայն նշված աճը պայմանավորված չէ քաղաքականության փոփոխությամբ և կարելի է փաստել, որ ԺՔՌ-ը ուղղակիորեն չի ազդել նշված ծրագրի բյուջետային հատկացումների վրա: Ֆինանսական հատկացումների աճը պայմանավորված է երկու գործոնով.

- Պլանավորված շահառուների թվաքանակի աճ՝ մոտ 24%-ով, ինչը պայմանավորված է շահառուների կանխատեսվող բնական աճով (քաղաքականության ազդեցությունը բացակայում է)
- Փոխհատուցման չափի աճ՝ մոտ 8.5%-ով: Նշվածը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի նույն չափով բարձրացմամբ, որի հետևանքով նվազագույն աշխատավարձի 60%-ի չափով հաշվարկվող խնամքի նպաստի չափը ինքնաբերաբար բարձրանում է: Այսինքն, այս պարագայում նույնպես ԺՔՌ ազդեցությունը բյուջետային որոշման վրա տեսանելի չէ:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ

Այս միջոցառման գծով պլանային ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները աճել են մինևույն 9%-ով (44260 շահառու 40609-ի դիմաց և 4.7 մլրդ դրամ 4.3 մլրդ. դրամ-ի դիմաց): Հատկացվող չափաբաժինների փոփոխություն չի նախատեսվել, ուստի կարելի է

արձանագրել, որ տվյալ դեպքում նույնպես տեսանելի չէ ԺՔՌ ազդեցությունը բյուջետային ցուցանիշների վրա:

Նախադպրոցական կրթության ծառայություններ

Նշված ծրագրին ուղղակի հատկացումները պետական բյուջեի համակարգում նախկինում բացակայում էին, ինչը պայմանավորված էր մինչ այժմ տվյալ բնագավառի ծախսերը միայն համայնքային լիազորությունների ենթատեքստում դիտարկելով: 2011 թվականից սկսած պետական բյուջեում նախատեսված են գումարներ չորս մարզպետարանների գծով և այս գործընթացը նախատեսվում է տարեցտարի ընդլայնել: Ըստ մարզպետարանների հատկացումները պլանավորված են հետևյալ բաշխվածքով.

Ծրագիր	Մարզպետարան	2011թ. բյուջեի նախագիծ	Շահառուներ
Նախադպրոցական կրթություն		96,995.7	
	ՀՀ Արագածոտնի մարզպետարան	21,895.4	6201
	ՀՀ Արարատի մարզպետարան	22,212.8	6301
	ՀՀ Լոռու մարզպետարան	13,221.9	125
	ՀՀ Շիրակի մարզպետարան	39,665.6	375

Հաշվի առնելով նախադպրոցական հաստատություններում ծառայությունների մատուցման կարևորությունը ընտանեկան պլանավորման գործընթացում կարելի է արձանագրել տվյալ բյուջետային որոշման և միջնաժամկետ հատվածում դրան ուղղվող գումարների ավելացման կարևորությունը: Այսպիսով, նշված ծրագրի գծով 2011թ. բյուջեի նախագծի և ԺՔՌ փոխկապակցվածությունը կարելի է համարել հիմնավորված:

Բնակարանաշինություն

Բնակարանաշինության հարցում ԺՔՌ- և 2011թ. բյուջեի նախագծի համահունչ լինելու գնահատականը (զուտ ազդեցությունը) բարդացված է 2008-09թթ. համաշխարհային ճգնաժամի հետևանքները մեղմելու նպատակով հակաճգնաժամային լայնածավալ միջոցառումների իրականացման պատճառով: Այսպես, համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների բնակարանային շինարարության ֆինանսավորման տեսանկյունից 2010թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում 2009թ. նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեից ֆինանսավորումը աճել է մոտ 30 անգամ: Նման աճը պայմանավորված է շինարարության ոլորտի մեծ կշռով ՀՆԱ արժեքի մեջ և, հետևաբար, կառավարության կողմից իրականացվում են լուրջ ներդրումներ ճգնաժամային ժամանակահատվածում այդ ոլորտի վերակենդանացման համար: Աղետի գոտում բնակարանային շինարարության գծով ծախսերը 2011թ. բյուջեի նախագծով նախատեսվում է ավելացնել մոտ 20%-ով՝ հասցնելով 26.9 մլրդ դրամի: Սակայն, այս ծախսերը նախատեսվում է իրականացնել ճգնաժամի հետևանքները հաղթահարելու նպատակով՝ արտաքին ֆինանսավորման աղբյուրներից: Քաղաքականության ճշգրտումներ և դրական զարգացումներ են նաև նկատվում երիտասարդ ընտանիքներին արտոնյալ վարկավորման հարցում պե-

¹ Նախատեսվում է 2011թ. սեպտեմբերից

տության կողմից աջակցության հարցում, մասնավորապես 2011թ. առավելապես խրախուսվելու է մարզերում հիպոթեկային վարկավորման ծրագրերին մասնակցությունը երիտասարդների կողմից: Թեև այս ծրագրի ֆինանսավորման հիմնական մասը պետական բյուջեից չի իրականացվում, սակայն բյուջեն փոխհատուցելու է արտոնյալ պայմանին նպաստող տոկոսադրույքի մասնաբաժինը:

Հետևաբար, կարելի է ամրագրել, որ բնակարանային շինարարության գծով ՀՀ պետական բյուջեն ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությանը որոշակիորեն համահունչ քայլեր է իրականացնում: Սակայն, անհրաժեշտ է ապահովել նմանատիպ ուղղությամբ ֆինանսավորման ծավալները միջնաժամկետ (ետ-ճգնաժամային) հատվածում, քանի որ ներկա պարագայում այդ գծով լայնածավալ ֆինանսավորումը ուղղակիորեն պայմանավորված չէ (և չի բխում) ԺՔԲ դրույթներից:

Գերակայություն 3. Մահացության մակարդակի նվազեցում

Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությամբ ամրագրված են մի շարք միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են մահացության մակարդակի նվազեցմանը: Սակայն, հարկ է նշել, որ պետական բյուջեի կառուցվածքը և կիրառվող դասակարգումները ուղղակիորեն չեն անդրադառնում մահացության խնդրին և մեծամասամբ ներյացված են առողջապահական ծրագրերում և որոշակիորեն խաչվում են ԺՔԲ երրորդ գերակայության նպատակների հետ:

Այս շարքում առավել ուշագրավ են մանկամահացության ցուցանիշների նվազեցմանը և որոշ հիվանդատեսակների բուժմանը ուղղվող ծրագրերի գնահատականը:

Ծննդօգնության գծով ծառայությունները (արտահիվանդանոցային և հիվանդանոցային) նպատակաուղղված են որակյալ ծառայությունների մատուցմանը և անտենատալ ծառայությունների հասանելիության բարձրացմանը: Բնականաբար, նշված ծառայությունների հասանելիության աստիճանի և որակի բարձրացումը նպաստում է մանկամահացության ցուցանիշների բարելավմանը: Վերջին տարիների այս ուղղությամբ պետական բյուջեի կողմից մեծ ուշադրություն է դարձվում և ոլորտի ծախսերը շարունակաբար աճում են: Բացառություն չի կազմում նաև 2011թ.պետական բյուջեի նախագիծը, որի շրջանակներում նախատեսված է հետևյալ պատկերը.

հազ. դրամ	2009 թվականի փաստացի	2010 թվականի հաստատված բյուջե	2011 թվականի նախագիծ	Աճ 2009թ. Փաստացի բյուջեի նկատմամբ	Աճ 2010թ. հաստատված բյուջեի նկատմամբ
Արտահիվանդանոցային մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	1,040,204.6	1,171,850.2	1,298,898.8	24.9	10.8
Հիվանդանոցային մանկաբարձական բժշկական օգնության	5,872,552.6	5,697,049.9	6,858,815.8	16.8	20.4

Ծառայություններ					
-----------------	--	--	--	--	--

Հարկ է նշել, որ թեև ծննդօգնությանը հատկացվող գումարները որոշակիորեն ավելացել են (մոտ 20%-ով), սակայն դա պայմանավորված է շահառուների թվաքանակի բնական աճով և ծառայությունների գնի միավորի արժեքի փոփոխություն չի նախատեսվել: Այսինքն, վերոնշյալ ծախսային ուղղություններով 2011թ. բյուջեի նախագիծում ԺՔՌ-ից բխող միջոցառումների ցանկի դրույթների ազդեցությունը չի դիտարկվում:

Միևնույն ժամանակ, որոշակիորեն (10%-ով) ավելացել են հղիության ախտաբանության միավորի գնի արժեքը, ինչպես նաև դեպքերի քանակը: Արդյունքում, մոտ 30%-ով ավելացել են այս ուղղությամբ ծախսերը՝ հասնելով 258 մլն. դրամի, ինչը որոշակիորեն թղթակցում է ժողովրդագրական ռազմավարությունից բխող միջոցառումների ցանկի հետ:

Ինչ վերաբերվում է վաղաժամ մահվան առավել տարածված պատճառ հանդիսացող հիվանդությունների գծով բյուջետային պլանի ցուցանիշներին, ապա ընդհանուր առմամբ, դրանց գծով ծախսերի աճը պայմանավորված է ծառայությունների միավոր գնի 10%-ոց աճով: Դա, մասնավորապես, վերաբերվում է հետևյալ ուղղություններով հիվանդանոցային ծառայություններին.

- Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնություն
- Տուբերկուլոզի բժշկական օգնություն
- Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ
- Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդություններ
- Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնություն

Նշված աճը չի կարող էական ազդեցություն ունենալ ոլորտում էական բարելավում ապահովելու համար, ուստի ընդհանուր առմամբ կարելի է արձանագրել ԺՔՌ միջոցառումների ցանկի դրույթների հետ նվազ աստիճանի փոխկապակցվածության մասին:

Գերակայություն 4. Բնակչության առողջության պահպանում և բարելավում

Բնակչության առողջության պահպանման և բարելավմանը նպաստում են բազմաթիվ գործոններ (առողջապահական, մշակութային, սոցիալ-տնտեսական, հոգեբանական և այլն), որոնցից առավել ուղղակիորեն նպաստում առողջապահական ծրագրերը:

Սույն հատվածը ուսումնասիրելիս հարկ է նշել, որ պետական բյուջեի կառուցվածքը և ծախսերի դասակարգումները կազմված են այնպես, որ առողջապահական ծրագրերի գծով առանձին հիվանդություններին կամ շահառուներին ուղղված միջոցները համախմբված չեն առանձնացված ծրագրերում: Նման խնդիր առկա է բյուջեում ներկայացված բազմաթիվ ծրագրերի հետ: Սակայն, եթե այլ ոլորտների պարագայում խնդիրը զգալիորեն կարգեցվի ծրագրային բյուջետավորման համակարգին անցնելուն պես, ապա առողջապահության բնագավառում ավանդականորեն առկա է ինստիտուցիոնալ դասակարգման, այն է հիվանդանոցային և արտահիվանդանոցային տարանջատման անհրա-

ժեշտությունը: Այսինքն, հաճախակի նույն հիվանդության դեմ պայքարի կանխարգելիչ և բուժիչ ծախսերը տարանջատվում են ըստ ծառայություններ մատուցող կառույցների: Ընդ որում, նման խնդիրը գոյություն ունի նաև զարգացած երկրների բյուջետային համակարգերում: Ուստի, ԺՔՌ այս գերակայության փոխկապակցվածության աստիճանը 2011թ. բյուջեի հետ անհրաժեշտ է իրականացնել ոչ թե ըստ հիվանդատեսակների, այլ ըստ առողջապահական կառույցներում մատուցվող ծառայությունների տեսակի:

Ստորև ներկայացվում են 2011թ. պետական բյուջեի նախագծի առողջապահական ծրագրերի ցուցանիշները և դրանց վրա ազդող ծախսային գործոններից առավել կարևորների գնահատականը:

հազ. դրամ	2009 թվականի փաստացի	2010 թվականի հաստատված բյուջե	2011 թվականի նախագիծ	Աճ 2009թ. Փաստացի բյուջեի նկատմամբ	Աճ 2010թ. հաստատված բյուջեի նկատմամբ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒ ԹՅՈՒՆ այդ թվում՝	54,759,670.0	54,210,042.5	61,453,089.0	12.2	13.4
Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	3,144,564.1	3,687,525.1	3,687,525.1	17.3	0.0
Արտահիվանդանոցային ծառայություններ	20,431,489.6	21,033,326.0	23,884,423.4	16.9	13.6
Հիվանդանոցային ծառայություններ	21,606,232.4	21,198,583.3	27,370,937.6	26.7	29.1
Հանրային առողջապահական ծառայություններ	2,853,610.7	2,796,361.1	2,961,068.6	3.8	5.9
Առողջապահություն (այլ դասերին չյատկանող)	6,723,773.3	5,494,247.0	3,549,134.3	-47.2	-35.4

Առավել մանրամասն բաշխվածքը ներկայացված է Հավելված Դ-ում:

Աղյուսակում ներկայացված տվյալների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ առողջապահության բնագավառում իրականացվել է ծախսերի որոշակի վերաբաշխում: Այդ վերաբաշխումների մի մասը կրում է քաղաքականության ճշգրտումների բնույթ, իսկ մեկ այլ մասը արձագանքում է միջավայրում պահանջարկի փոփոխություններին: Աղյուսակի բաղադրիչները ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ հիմնական խոշոր քաղաքականության փոփոխությունը (ճշգրտումը) առողջապահության բնագավառում իրականացվել է հիվանդանոցային ծառայություններում (ինչը թվում է համահունչ ԺՔՌ երկրորդ և երրորդ գերակայությունների հետ): Հիվանդանոցային ծառայություններում, իր հերթին, ամենախոշոր փոփոխությունը տեղի է ունեցել «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով: Աճը կազմում է ավելի քան երկու անգամ և պայմանավոր-

ված է ոչ միայն պետության կողմից ֆինանսավորվող դեպքերի (շահառուների) քանակի ավելացմամբ², այլ նաև միավոր գնի մոտ 70%-ով աճով:

	Հիվանդների թիվը			Գումար, մլն. դրամ		
	2009 փաստ.	2010թ. բյուջե	2011թ. պլան	2009 փաստ.	2010թ. բյուջե	2011թ. պլան
Երեխաների բժշկական օգնության գծով պետական պատվեր, այդ թվում	37,918	31,360	37,738	3,446.9	3,126.1	6,388

Սա արդյունք է այս բնագավառում հստակ ծրագրի ներդրման և բարեփոխումների իրականացման: Նշված հանգամանքը զգալիորեն համահունչ է ԺՔՌ միջոցառումների ցանկի դրույթներին:

Բյուջետային հատկացումների ենթատեքստում քաղաքականության փոփոխության տեսանկյունից երկրորդ խոշոր աճը պլանավորված է «Մանկաբարձական բժշկական ծառայություններ» ծրագրում: Այս աճի մասին ներկայացված է սույն հաշվետվության երկրորդ գերակայության նկարագրության հատվածում:

Մնացած միջոցառումներից մեծ մասի գծով առողջապահության ծրագրերի գծով քաղաքականությունը կրում է ավելի արձագանքող (ռեակցիոն) բնույթ և ֆինանսավորման ճշգրտումների զգալի մասը միայն ծառայությունների գծով պահանջարկի կանխատեսվող ծավալի նկատմամբ արձագանքն է կամ ծառայությունների միավոր գնի մոտ 10%-ով ճշգրտումը, ինչը չի կարող հանգեցնել առողջապահական ծառայությունների որակի բարձրացման կամ ոլորտի խնդիրների նախաձեռնողական քաղաքականությամբ լուծման:

Վերոնշյալի ցանկում են նաև այն ծրագրերը, որոնք մատնանշված են ԺՔՌ միջոցառումների ցանկում՝ որպես երրորդ կամ չորրորդ գերակայությանը նպատակաուղղված միջոցառումներ: Այսպես՝ անփոփոխ են մնացել հետևյալ ծրագրերով ծախսերը (այսինքն, 2011թ. պետական բյուջեի նախագծում չի դիտարկվում Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության դրույթների ազդեցությունը)։

- ՄԻԱՎ/ՁԻԱՀ ծրագրի գծով փոփոխություններ նախատեսված չեն
- Դեղորայքի տրամադրման ծրագրերով նախատեսված է 3,6 մլրդ. դրամ, այսինքն հատկացման չափը մնացել է անփոփոխ

Իսկ ստորև բերված ծրագրերի գծով ծախսերը աճել են ոչ էականորեն, ուստի բյուջեի և ԺՔՌ փոխկապակցվածությունը էական չէ.

- Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայություններ – մոտ 10%-ով աճ՝ պայմանավորված մեկ օրվա միավոր գնի աճով

² Օրինակ՝ ծրագրով նախատեսվում է մինչև 7 տարեկան երեխաների ամբողջական սպասարկման ծածկույթ՝ անկախ սոցիալական խմբի և հիվանդության բարդության:

- Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ – մոտ 10%-ով՝ պայմանավորված մեկ օրվա միավոր գնի աճով
- Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնություն – մոտ 10%-ով՝ պայմանավորված մեկ օրվա միավոր գնի աճով
- Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ – մոտ 10%-ով՝ պայմանավորված մեկ օրվա միավոր գնի աճով

հազ. դրամ	2009 փաստ.	2010թ. բյուջե	2011թ. պլան
ՄԻԱՎ/ՁԻԱՀ	112,938.4	112,938.4	112,938.4
Դեղորայքի տրամադրում	3,045,426.1	3,687,525.1	3,687,525.1
Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայություններ	1,209,897.3	1,186,140.3	1,304,956
Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	162,661.3	154,663.8	170,130
Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնություն	959,696.6	940,642.6	1,035,264.8
Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	362,009.4	359,944.6	396,128.8

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերի զգալի նվազեցումը հիմնականում պայմանավորված Համաշխարհային Բանկի ծրագրերից մեկի գծով ծախսերի նվազեցմամբ:

Գերակայություն 5. Միգրացիոն գործընթացների կարգավորում

Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության 2010թ. միջոցառումների ցանկի 5-րդ գերակայությանը վերաբերող միջոցառումներից պետական բյուջեից ֆինանսավորում ակնկալվում էր միայն թրաֆիքինգի վտանգների վերաբերյալ բնակչության շրջանում տեղեկատվության տարածում: Հատկանշական է, որ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բյուջեում այս ուղղությամբ ծախսերը դադարեցված են արդեն իսկ 2010թ. բյուջեից ի վեր: Փոխարենը, նախատեսվել են ծախսեր թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ՝ 32874.3 հազ. դրամ չափով (26.6% ավել քան 2010թ. համար էր նախատեսված): Ընդհանուր առմամբ, թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղակիորեն անդրադառնում են հետևյալ ծրագրերը, թեև դրանց մի մասը պայքարում է թրաֆիքինգի հետևանքների դեմ, մինչդեռ մյուսները կանխարգելման են ուղղված:

Ծրագիր	Միջոցառում	Գերատեսչություն	Գումար
Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ	Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիկինգի դեմ պայքարի միջոցառումներ	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	8,000.0
Հասարակական կարգի	Կազմակերպված	ՀՀ կառավարությանն	539,301.2

Ծրագիր	Միջոցառում	Գերատեսչություն	Գումար
պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար	հանցագործությունների, թրաֆիքինգի և թմրամոլության դեմ պայքար	առընթեր ոստիկանություն	
Հիվանդանոցային բուժօգնության ծառայություններ	Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ	ՀՀ առողջապահության նախարարություն	2,200.0
Ընտանիքներին, կանանց և երեխաներին մատուցվող ծառայություններ	Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հեգեմանական վերականգնողական ծառայություններ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	32,874.3
Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում	Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	26,056.0

Գերակայություն 6. Տարածքների զարգացում և բնակչության տարածքային բաշխվածության անհամամասնության մեղմացում

Տարածքների զարգացմանը և բնակչության տարածքային բաշխվածության անհամամասնության մեղմացմանը ուղղված են բազմաթիվ ծրագրեր մշակութային, կրթական, առողջապահական, տնտեսական զարգացման, ենթակառուցվածքների և այլ բնագավառներում: Բացի այդ, համայնքների հավասարաչափ զարգացման համար նախատեսված է նաև միջբյուջետային (համահարթեցման) տրանսֆերտների համակարգ, որը յուրաքանչյուր տարի զգալի գումարներ է հատկացնում բոլոր համայնքներին այն սկզբունքով, որը առավել նպաստավոր է ավելի թույլ կարողություններով համայնքների համար:

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով, հարկավոր է արձանագրել, որ ԺՔՌ միջոցառումների ցանկով տարածքների զարգացմանը ուղղված ՀՀ պետական բյուջեին ամրագրված երեք միջոցառումները ամբողջովին չեն արտահայտում բյուջետային համակարգով իրականում նախատեսված ծածկույթը և շրջանակը³:

Այնուամենայնիվ, ստորև ներկայացվում է այդ ցանկով ամրագրված միջոցառումների գծով 2011թ. պետական բյուջեյի նախագծի ծախսերի նկարագրությունը:

ՀՀ մարզերում մշակույթի զարգացման ապահովում

Մշակույթի ծախսերի 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է ավելացնել մոտ 10%-ով: Այս ոլորտը բավականին դինամիկ է զարգանում տարեց տարի և խոսքը վերաբերվում է առավելապես ոչ թե բյուջետային հատկացումների չափին, այլ անգամ համանման հատկացումների պարագայում ներքին բաշխումներին և վերաբաշխումներին: Ոլորտի ներսում բազմաթիվ ծրագրեր և ենթածրագրեր գոյություն ունեն, որոնք սակայն բյուջետային փաստաթղթերում ավելի ագրեգատ և համախմբված են ներկայացվում:

³ Հատկանշական է, որ 2011թ. բյուջետային փաստաթղթերը առաջին անգամ նախատեսվում է արտահայտել բոլոր ծախսերի նաև տարածքային բաշխվածքը, որը խիստ կարևոր կլինի հետագա ուսումնասիրությունների և վերլուծությունների համար

Մշակույթի գծով ներուրտային բաշվածքը 2011թ. բյուջեի նախագծում ունի հետևյալ պատկերը.

	հազ.դրամ
ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	17,981,760.9
Հանգստի և սպորտի ծառայություններ	1,501,333.4
Հանգստի և սպորտի ծառայություններ	1,501,333.4
Մշակութային ծառայություններ	10,654,529.5
Գրադարաններ	1,440,227.1
Թանգարաններ և ցուցասրահներ	1,923,921.4
Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	603,972.2
Այլ մշակութային կազմակերպություններ	742,332.3
Արվեստ	4,958,377.0
Կինեմատոգրաֆիա	630,448.3
Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	355,251.2
Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ	4,845,626.6
Հեռուստառադիոհաղորդումներ	3,703,409.1
Հրատարակչություններ, խմբագրություններ	992,632.5
Տեղեկատվության ձեռքբերում	149,585.0
Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	555,326.1
Երիտասարդական ծրագրեր	375,734.4
Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	179,591.7
Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	424,945.3
Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	424,945.3

Ծախսերի մի մասը իրականացվում է մարզերում և ստորև բերված աղյուսակները ներկայացնում են նախորդ տարիների նկատմամբ բյուջետային հատկացումների զարգացումները ըստ ծրագրերի և կատարողների:

Թանգարաններ և ցուցասրահներ

հազ. դրամ	2009թ. փաստ.	2010թ. բյուջե	2011թ. նախագիծ	2009թ. փաստի նկատմամբ	2010թ. բյուջեի նկատմամբ
Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	1,336,688.0	1,351,193.8	1,450,998.6	108.6	107.4
ՀՀ մշակույթի նախարարություն	1,081,433.8	1,092,559.2	1,158,366.5	107.1	106.0
ՀՀ պաշտպանության նախարարություն	104,752.4	107,829.2	120,518.3	115.1	111.8
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	36,321.5	36,368.3	40,698.0	112.0	111.9
ՀՀ բնապահպանության	27,156.2	27,228.2	30,678.8	113.0	112.7

հազ. դրամ	2009թ. փաստ.	2010թ. բյուջե	2011թ. նախագիծ	2009թ. փաստի նկատմամբ	2010թ. բյուջեի նկատմամբ
Նախարարություն					
ՀՀ Արարատի մարզպետարան	12,314.4	12,338.9	13,944.8	113.2	113.0
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	12,789.0	12,811.1	14,368.9	112.4	112.2
ՀՀ Լոռու մարզպետարան	8,303.0	8,316.4	9,411.3	113.3	113.2
ՀՀ Շիրակի մարզպետարան	36,743.7	36,838.3	44,149.9	120.2	119.8
ՀՀ Սյունիքի մարզպետարան	8,550.9	8,568.6	9,605.7	112.3	112.1
ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան	8,323.1	8,335.6	9,256.4	111.2	111.0
ՀՀ համայնքային բյուջեների և սուբվենցիաների տրամադրում	121,712.4	121,924.2	193,656.1	159.1	158.8

Աղյուսակից ակնհայտ երևում է, որ մարզային կտրվածքով ծախսերի աճը կրում է առաջանցիկ բնույթ ենթաոլորտի ընդհանուր աճի նկատմամբ: Սակայն, բացարձակ առումով, այդ գումարները (և աճը) խոշոր չեն: Այնուամենայնիվ, հստակ նկատվում է այս ենթաոլորտում ծախսերի ապակենտրոնացման միտում: Պատկերը լրացվում է նաև համայնքային նշանակության թանգարաններին սուբվենցիաների տրամադրման միջոցառման մոտ 60%-ով աճը:

Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ

հազ. դրամ	2009թ. փաստ.	2010թ. բյուջե	2011թ. նախագիծ	2009թ. փաստի նկատմամբ	2010թ. բյուջեի նկատմամբ
Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում	29,284.5	29,335.5	34,517.5	117.9	117.7
ՀՀ մշակույթի նախարարություն	25,379.1	25,430.1	28,069.4	110.6	110.4
ՀՀ Կոտայքի մարզպետարան	1,301.8	1,301.8	1,482.7	113.9	113.9
ՀՀ Սյունիքի մարզպետարան	1,301.8	1,301.8	1,482.7	113.9	113.9
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	1,301.8	1,301.8	3,482.7	267.5	267.5

Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում միջոցառման գծով աճը նախատեսված է բոլոր կատարողների գծով: Մարզպետարանների գծով նախատեսված գումարները համեմատաբար աննշան են, սակայն աճի աստիճանը կրում է ընդհանուրի նկատմամբ առաջանցիկ բնույթ:

Այլ մշակութային կազմակերպություններ

հազ. դրամ	2009թ. փաստ.	2010թ. բյուջե	2011թ. նախագիծ	2009թ. փաստի նկատմամբ	2010թ. բյուջեի նկատմամբ
Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում	187,573.2	188,353.2	194,637.7	103.8	103.3

Համայնքներին մշակութային կազմակերպությունների աջակցության տեսանկյունից պատկերը գրեթե անփոփոխ է և 3%-ոց աճը, բնականաբար, չի կարող վկայել ԺՔՌ միջոցառումների ցանկի բյուջեի նախագծի վրա ազդեցության մասին:

Արվեստ

հազ. դրամ	2009թ. փաստ.	2010թ. բյուջե	2011թ. նախագիծ	2009թ. փաստի նկատմամբ	2010թ. բյուջեի նկատմամբ
Մշակութային միջոցառումների իրականացում	958,263.4	1,247,738.3	1,089,669.4	113.7	87.3
ՀՀ մշակույթի նախարարություն	900,342.7	951,335.6	853,733.1	94.8	89.7
ՀՀ սփյուռքի նախարարություն	20,649.0	259,131.0	198,664.6	962.1	76.7
ՀՀ Շիրակի մարզպետարան	3,457.7	3,457.7	3,457.7	100.0	100.0
ՀՀ Լոռու մարզպետարան	3,542.3	3,542.3	3,542.3	100.0	100.0
ՀՀ Արմավիրի մարզպետարան	2,563.6	2,563.6	2,563.6	100.0	100.0
ՀՀ Կոտայքի մարզպետարան	2,404.0	2,404.0	2,404.0	100.0	100.0
ՀՀ Տավուշի մարզպետարան	3,442.1	3,442.1	3,442.1	100.0	100.0
ՀՀ Արարատի մարզպետարան	3,195.4	3,195.4	3,195.4	100.0	100.0
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	3,278.2	3,278.2	3,278.2	100.0	100.0
ՀՀ Վայոց Ձորի մարզպետարան	4,938.5	4,938.5	4,938.5	100.0	100.0
ՀՀ Սյունիքի մարզպետարան	7,171.7	7,171.7	7,171.7	100.0	100.0
ՀՀ Արագածոտնու մարզպետարան	3,278.2	3,278.2	3,278.2	100.0	100.0
ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրում	219,198.4	205,721.8	236,016.8	107.7	114.7
Թատերական ներկայացումներ	895,435.7	902,931.3	1,034,283.2	115.5	114.5
ՀՀ մշակույթի նախարարություն	831,721.8	839,149.9	962,353.5	115.7	114.7
ՀՀ Սյունիքի մարզպետարան	30,752.9	30,775.9	34,678.5	112.8	112.7
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	32,961.0	33,005.5	37,251.2	113.0	112.9
Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ	875,823.8	864,735.3	978,252.3	111.7	113.1
ՀՀ մշակույթի նախարարություն	816,153.4	805,064.9	910,401.7	111.5	113.1

հազ. դրամ	2009թ. փաստ.	2010թ. բյուջե	2011թ. նախագիծ	2009թ. փաստի նկատմամբ	2010թ. բյուջեի նկատմամբ
ՀՀ Շիրակի մարզպետարան	59,670.4	59,670.4	67,850.6	113.7	113.7
Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացում	18,606.3	18,606.3	18,606.3	100.0	100.0
ՀՀ սփյուռքի նախարարություն	18,606.3	18,606.3	18,606.3	100.0	100.0

Արվեստի գծով ըստ առանձին միջոցառումների պատկերը տարբեր է, սակայն, բոլոր դեպքերում այստեղ ևս նույնպես նկատվում է ծախսերի հարաբերական ապակենտրոնացման միտում: Անգամ կրճատումների պարագայում, դրանք առավելապես իրականացվում են ոչ ի հաշիվ մարզպետարանների ծախսերի: Այնուամենայնիվ, ինչպես և որոշ այլ պարագաներում, ծախսերի բացարձակ մեծության նվազ լինելը ինքնին խոսում է այս ոլորտի նկատմամբ ԺՔԲ ազդեցության նվազ լինելու կամ բացակայության մասին:

Առանձնակի անհրաժեշտ է նշել «Արի տուն» ծրագիրը՝ հաշվի առնելով թե՛ այս ծրագրի կարևորությունը մշակութային և ժողովրդագրական տեսանկյունից և թե՛ այս ծրագրով նախատեսված կրկնակին գերազանցող աճը:

հազ. դրամ	2009թ. փաստ.	2010թ. բյուջե	2011թ. նախագիծ	2009թ. փաստի նկատմամբ	2010թ. բյուջեի նկատմամբ
«Արի տուն» ծրագրի շրջանակներում սփյուռքի երիտասարդության պարբերական այցելություններ Հայաստան	25,706.1	35,000.0	75,000.0	291.8	214.3

Միջոցառումների այս խումբը ընդհանրացնելիս՝ կարելի վկայել ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության հետ 2011թ. բյուջեի նախագծի հատվածային կերպ համահունչ լինելու մասին: Ինչպես արդեն իսկ ներկայացվել է վերևում, **որոշ կարևոր ծրագրերի գծով նկատելի են հստակ և ժողովրդագրական ցուցանիշների բարելավմանը նպաստող քաղաքականության զարգացումներ, ինչը ողջունելի է: Սակայն, ընդհանուր առմամբ, ՀՀ մարզերում մշակույթի զարգացման բնագավառում բյուջետային հատկացումները դեռ ամբողջովին համահունչ չեն ժողովրդագրական ռազմավարությանը սահմանված նպատակադրումներին:**

«Թանգարան անիվների վրա» և «Շարժական գրադարան» ծրագրերի իրականացում

«Թանգարան անիվների վրա» և «Շարժական գրադարան» միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է 2011թ. բյուջեի նախագծի փաթեթի մաս կազմող բյուջեի ծախսերի բացատրագրի «ծրագրային բյուջետավորման» համապատասխան հա-

վելվածներում, որտեղ նշված է «Թանգարան անիվների վրա» միջոցառման գծով նախատեսված ոչ ֆինանսական կատարողական ցուցանիշների պլանը, այն է 10 այցելություն տարբեր բնակավայրեր և 8 արտագնա այցելություններ: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս միջոցառումը մաս է կազմում ավելի ագրեգատ «թանգարանների» ծրագրի, ֆինանսական ցուցանիշների դինամիկան և պատկերը այդ փաստաթղթերից վերհանելը չհաջողվեց: Այնուամենայնիվ, համեմատաբար թարմ այս նախաձեռնությունը միանշակ բարենպաստ ազդեցություն կարող է ունենալ ժողովրդագրական ռազմավարությամբ սահմանված նպատակներին հասնելու տեսանկյունից, ուստի հետագա տարիների այս ծրագրի շարունակումը և զարգացումը ԺՔՌ տեսանկյունից պետք է դիտարկվի դրական:

Գյուղական և սահմանամերձ բնակավայրերում բնակվող հղի կանանց, երիտասարդ մայրերի ու նորածինների համար որակյալ առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնում

Այս միջոցառման գծով որոշակի տեղեկատվությունը առկա է վերևում ներկայացված բաժիններում: Ամեն դեպքում, ԺՔՌ կողմից այս հարցի ներկայացումը խիստ կարևոր և ժամանակին է: Տարբեր հետազոտություններում ու հաշվետվություններում⁴ հստակ դիտարկվում է մարզերում, ու առավելապես փոքր ու միջին համայնքներում, մայրության և ծննդաբերության հետ կապված ծառայություններից օգտվելու նվազ աստիճանը: Ծննդաբերության և ախտորոշման հասանելիությանը նպաստող վկայագրերի ներմուծումը դրական է ազդել խնդրի մեղմացմանը, սակայն, ֆիզիկական և ֆինանսական հասանելիության աստիճանը գյուղերում և սահմանամերձ համայնքներում դեռ կարևոր է:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը, նշված ոլորտում հասանելիության աստիճանի բարձրացմանը անհրաժեշտ է ուղղել ոչ միայն լրացուցիչ գումարներ՝ ֆիզիկական և ֆինանսական հասանելիության աստիճանը բարձրացնելու նպատակով, այլև առաջարկելով նոր մոտեցումներ, որոնք պայմանավորված չեն միայն գումարների ավելացմամբ:

Գերակայություն 7. Հոգևոր (ոչ նյութական) մշակութային արժեքների պահպանություն և պաշտպանություն

Ազգային խաղերի մրցույթների կազմակերպում

Ազգային խաղերի գծով հստակ ծրագրային կառուցվածք ՀՀ պետական բյուջեում չկա, սակայն կան բազմաթիվ ծրագրեր և միջոցառումներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակի կերպ նպաստում են ազգային (ներպետական, միջպտական, համահայկական) սպորտի, առողջ ապրելակերպի և այլ մրցույթների հանրայնացմանը և զարգացմանը:

Նշված դասակարգման մաս կազմող միջոցառումների գծով 2011թ. բյուջեի նախագծով նախատեսվել է ոչ ծավալուն աճ: Հանգստի և սպորտի ծառայությունների գծով ծախսերի աճը կազմել է 84.8 մլն. դրամ, կամ մոտ 6%: Հիմնականում խոշոր փոփոխություններ չեն

⁴ Օրինակ՝ տես Առաջադեմ սոցիալական տեխնոլոգիաներ ՀԿ կողմից հրատարակված «Օգուտների բաշխման վերլուծություն», www.ast.am

նախատեսվել, սակայն նկատելի է ծրագրերում ներգրավված անձնակազմի շուրջ 10%-ով աշխատավարձերի բարձրացմամբ պայմանավորված հավեճերը: Որոշ առումով քաղաքականության ճշգրտումներ և փոփոխություններ են նկատելի առանձին միջոցառումների գծով, որոնցից են.

- «Լավագույն մարզական ընտանիքի մրցույթի անցկացում» ծրագրի գծով ծախսերը աճել են 46 մլն. դրամով, ինչը պայմանավորված է շահառուների թվաքանակի ավելացմամբ
- Որոշ միջոցառումներիցանկում նախատեսված են նոր նախաձեռնություններ
 - Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցություն՝ 35 մլն. դրամ
 - 2011թ. Երևանում կայանալիք խուլերի ըմբշամարտի Եվրոպայի առաջնություն՝ 13.7 մլն. դրամ
 - Ամառային առաջին պատանեկան սպարտակիադայի անցկացում՝ 20.0 մլն. դրամ
 - Համահայկական խաղեր՝ 80 մլն. դրամ
 - Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր՝ 7 մլն. դրամ:

հազ. դրամ	2009թ. փաստ.	2010թ. բյուջե	2011թ. նախագիծ	2009թ. փաստի նկատմամբ	2010թ. բյուջեի նկատմամբ
Հանգստի և սպորտի ծառայություններ	1,498,224.9	1,416,565.6	1,501,333.5	100.2	106.0
ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	994,457.7	884,967.2	884,967.2	89.0	100.0
Շախմատիստների պատրաստման ծառայություններ	52,000.0	52,000.0	55,482.4	106.7	106.7
Համահայկական խաղերի անցկացում	15,000.0	0.0	80,000.0	533.3	
2011 թվականին Երևանում կայանալիք խուլերի ըմբշամարտի Եվրոպայի առաջնության անցկացում	0.0	0.0	13,747.0		
Հայաստանի Հանրապետությունում ամառային առաջին պատանեկան սպարտակիադայի անցկացում	0.0	0.0	20,000.0		
Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների	50,000.0	50,000.0	50,000.0	100.0	100.0

հազ. դրամ	2009թ. փաստ.	2010թ. բյուջե	2011թ. նախագիծ	2009թ. փաստի նկատմամբ	2010թ. բյուջեի նկատմամբ
հանձնում					
Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում	0.0	0.0	7,000.0		
Ուսանողական մարզական միջոցառումներ	23,000.0	4,350.0	23,000.0	100.0	528.7
ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում	6,959.9	6,960.0	6,960.0	100.0	100.0
«Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում	17,500.0	23,000.0	69,000.0	394.3	300.0
Մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացում	7,998.7	8,000.0	8,000.0	100.0	100.0
Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ	8,997.6	9,000.0	9,000.0	100.0	100.0
Նավամոդելային սպորտի զարգացում	5,500.0	5,500.0	5,500.0	100.0	100.0
Սպորտային միջոցառումների կազմակերպում	45,987.8	55,987.8	57,340.8	124.7	102.4
Հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրություն և աշխարհի չեմպիոններին թոշակի հատկացում	17,254.2	17,265.6	20,565.6	119.2	119.1
Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցում	2,585.3	3,898.1	3,270.1	126.5	83.9
Հակադոպինգային համաշխարհային գործակալությանը անդամակցում	2,155.6	5,173.1	2,619.1	121.5	50.6
Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացում	145,830.0	150,000.0	150,000.0	102.9	100.0
Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցության ապահովում	38,816.1	0.0	34,881.3	89.9	

Ի լրումն վերը նշվածի, 2011թ. բյուջեի նախագծով նաև նախատեսվում է Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը աջակցություն, որի համար նախատեսված նույն անյքան, որքան և նախորդ տարվա բյուջեով, այսինքն մոտ 12 մլն. դրամ:

Ամփոփելով աղյուսակի տվյալները կարելի է փաստել, որ թեև 2011թ. բյուջեի նախագծով նախատեսված են որոշ ճշգրտումներ, շտկումներ և որոշ դեպքերում անգամ զգալի աճ, այնուամենայնիվ, որպես ընդհանրական պատկեր, բյուջեի նախագիծը էական զարգացումներ և քաղաքականության նկատելի զարգացումներ չի նախատեսում: Բացառությամբ «Համահայկական խաղեր», «լավագույն մարզական ընտանիք», «ուսանողական մրցումներ»⁵ և մեկ-երկու ոչ ծավալուն միջոցառումների, ԺՔՌ տվյալ գերակայության այս միջոցառման գծով 2011թ. բյուջեի նախագիծը նախաձեռնողական բնույթ չի կրում և համահունչ չէ ռազմավարության դրույթներին:

Ժողովրդական արհեստագործներին պետական աջակցության տրամադրում

ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծի կառուցվածքում չի դիտարկվում այս ուղղությամբ ծախսերի հստակ ծրագրերի առկայություն: Հավանաբար, ժողովրդական արհեստագործներին պետական աջակցության միջոցառումները մաս են կազմում ավելի ագրեգատ ծրագրերի մաս: Այդ իսկ պատճառով, սույն հաշվետվության տեսանկյունից հստակ ծախսերի դիտարկումը և ԺՔՌ հետ դրանց փոխկապակցվածության աստիճանը վերհանելու և վերլուծելու հնարավորությունը միայն փաստաթղթային ուսումնասիրությամբ հնարավոր չէ:

Ժողովրդական արհեստագործական հմտություններին վերաբերող ուսումնական, խորհրդատվական, օժանդակ ձեռնարկների կազմում և հրատարակում

ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծի բովանդակությունից հնարավոր չէ վերհանել և դիտարկել ժողովրդական արհեստագործական հմտություններին վերաբերող ուսումնական, խորհրդատվական, օժանդակ ձեռնարկների կազմման և/կամ հրատարակման ուղղվող ծախսերը, ինչը պայմանավորված է բյուջետային դասակարգման ավելի ընդհանրական խմբավորմամբ: Այնուամենայնիվ, ուսումնասիրելով այդ տեսակի միջոցառումների անգամ ագրեգար տվյալները կարելի է եզրակացնել, որ էական փոփոխություններ բյուջեի նախագծով նախատեսված չեն և տվյալ ուղղությամբ ծախսերի իրականացումը պայմանավորված է պատասխանատու գերատեսչության կողմից այդ հարցի նկատմամբ կոնկրետ վերաբերմունքից:

հազ. դրամ	Պատասխանատու գերատեսչություն	2009թ. փաստ.	2010թ. բյուջե	2011թ. նախագիծ	2009թ. փաստի նկատմամբ	2010թ. բյուջեի նկատմամբ
Աջակցություն գրականության հրատարակմանը	ՀՀ մշակույթի նախարարո	40,000.0	40,000.0	40,000.0	100.0	100.0

⁵ Ըստ քության, նշված ծրագրով զգալի աճը նույնպես քաղաքականության զարգացման արդյունք չէ: Աճը պայմանավորված է նրանով, որ այս միջոցառումը իրականացվում է երկու տարին մեկ, այդ իսկ պատճառով էլ այն զգալի աճ է դրսևորում 2010թ. բյուջեի նկատմամբ, սակայն, անփոփոխ է 2009թ. բյուջեի համեմատությամբ

հազ. դրամ	Պատասխանատու գերատեսչություն	2009թ. փաստ.	2010թ. բյուջե	2011թ. նախագիծ	2009թ. փաստի նկատմամբ	2010թ. բյուջեի նկատմամբ
	Կայուն					
Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ	ՀՀ սփյուռքի նախարարություն	24,970.0	30,304.0	30,304.0	121.4	100.0
Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրում և առաքում սփյուռքի համայնքներին	ՀՀ սփյուռքի նախարարություն	0.0	0.0	11,000.0		
Հանրային իրազեկման ապահովում	ՀՀ Նախագահի աշխատակազմ	0.0	75,681.0	75,681.0		100.0

Բացահայտված խնդիրներ ու Առաջարկություններ

Այս գլուխը նախատեսված է վերոնշյալ խնդիրներ համախմբված ներկայացման և համակարգային լուծման ուղղությամբ որոշ առաջարկությունների ներկայացման համար: Հատվածային լուծումները, որոնք կարող են բխել սույն վերլուծության արդյունքներից, այնուամենայնիվ, չեն հանդիսանում համանման դեպքերում զանազան հայեցակարգերի ու ռազմավարությունների բյուջետային համակարգային ինտեգրման լավագույն լուծումը: Ընդհակառակը, անհրաժեշտ են լուծումներ, որպեսզի ռազմավարություններ մշակողները պարտադրված լինեն դրանք մշակելիս նախատեսել նաև ծրագրային դրույթների սահուն ինտեգրումը ֆինանսական պլանավորման համակարգերում:

Բացի այդ, սույն վերլուծությունը հիմնականում դիտարկել է բյուջետային հատկացումների՝ ԺՔՌ դրույթների հետ համահունչ լինելու աստիճանը: Սակայն, նման վերլուծությունը, ամեն դեպքում, մասնակի արդյունավետություն ունի, քանի որ բյուջետային հատկացումների աճը (առավելապես, կտրուկ աճը) ոչ միշտ է թղթակցում ծրագրի նպատակների հասանելությանը: Այդ իսկ պատճառով, ի լրումն զուտ բյուջետային/ֆինանսական վերլուծության, անհրաժեշտ է իրականացնել ոլորտային ավելի խորացված ուսումնասիրություն, որի նպատակը կհանդիսանա ԺՔՌ դրույթներով ամրագրված միջոցառումների ու գերակայությունների և ժողովրդագրական իրավիճակի զարգացման նպատակների պատճառա-հետևանքային կապը և առաջնահերթությունները: ՀՀ Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը խոշոր քայլեր այդ ուղղությամբ արդեն իսկ կատարել է, սակայն դրանք անհրաժեշտ է համալրել ոչ միայն և ոչ այդքան գործոնների ներկայացմամբ, այլ արդեն իսկ ներկա-

յացված գործոնների ազդեցության գործակիցների և կշիռների ուսումնասիրությամբ ու վերլուծությամբ: Այսպես՝ ռազմավարությունում տեղ գտած առաջնայնությունների ձևաչափը հեշտությամբ չի տրանսֆորմացվում բյուջետային ծրագրերի առաջնայնությունների: Ամենայն հավանականությամբ, այդ բարդ վերլուծական աշխատանքների իրականացման համար բավարար չի լինի փաստաթղթային ուսումնասիրությունը, այլ հարկավոր կլինի խորացված հետազոտության իրականացումը: Հարկավոր է տարանջատել ժողովրդագրական նպատակների տեսակետից «առաջնային» և «աջակից» ծրագրերի դասակարգում և առաջարկություններ մշակելիս առաջնորդվել այդ դասակարգումով, որպեսզի տարանջատվեն զուտ ժողովրդագրական և այլ գործոնները և ծրագրերը: Այնուհետև, ըստ նշված առաջնահերթությունների և ծրագրերի անհրաժեշտ է իրականացնել ֆինանսական կշիռների կիրառում և ռեսուրսների առկայության վերլուծություն, որից հետո միայն հնարավոր կլինի տեղափոխել նշված դիտարկումները և առաջարկությունները բյուջետային որոշումների դաշտ: Հակառակ դեպքում, բոլոր փաստաթղթերը կդիտարկվեն որպես ցանկությունների ցանկ և կինտեգրվեն բյուջետային համակարգ «մնացորդային» որոշումների սկզբունքով:

Ընդհանուր բնույթի (համակարգին առնչվող) խնդիրներ

- Ոլորտային ռազմավարությունների (ներառյալ ԺՔՌ) կապը բյուջետային որոշումների հետ բավականին բարդացված է: Դրա պատճառներից են որոշումների կայացման ոչ միասնական մոտեցումներն ու սկզբունքները և քաղաքականությունների մշակման ոչ-ստանդարտացված մոդելները ու ձևաչափերը: Արդյունքում, հաճախակի ոլորտային ռազմավարություններն են հարմարեցվում ՄԺԾԾ դրույթներին, և ոչ հակառակը: Բացի դրանից, ՄԺԾԾ համակարգը ընձեռում է ավելի լայն հնարավորություններ ճիշտ մշակված ռազմավարությունների և ծրագրերի քննարկման և բյուջետային որոշումներում (միջոլորտային և ներոլորտային սահմանաչափերի որոշման ժամանակ) ինտեգրման համար, սակայն դրանք, կարծես թե, ոչ լիարժեք են օգտագործվում հենց վերևում ներկայացված խնդիրների պատճառով, այն է, ձևաչափի ու բովանդակության ոչ ամբողջական ադեկվատությունը բյուջետային քննարկումների պահանջներին⁶: Բացի դրանից, ոլորտային ռազմավարություններից բխող միջոցառումների ցանկը չպետք է կրկնօրինակի (ավելին՝ հակասի) բյուջետային համակարգում (performance budgeting) կամ կատարողական կառավարման (performance management) կիրառվող տարեկան արդյունքային ցուցանիշների պլանավորման գործիքներին: Առանձին ոլորտային միջոցառումների ցանկը չունի այն համակարգված մոնիտորինգային և հաշվետվողական հիմքը, որը ներկայումս զարգանում է բյուջետային և կառավարման համակարգերում: Իսկ դրանց կրկնօրինակումը հղի է անհամապատասխանությունների և հակասությունների առաջացման ռիսկերով: Այդ իսկ պատճառով, առաջարկվում է սահմանել ոլորտային քաղաքականության մշակման, իրականացման, մոնիտորինգի և հաշվետվո-

⁶ Օրինակ՝ Հավելված Բ-ում ներկայացված է ՄԺԾԾ հայտի շրջանակներում և բյուջետային ծրագրին փոխկապակցված նոր նախաձեռնության ձևաչափը

ղականության միասնական սկզբունքներ, ձևաչափեր և հիերարխիա, որպեսզի բոլոր փաստաթղթերը սիներգիկ կերպ կիրառվեն:

- Մեկ այլ հետաքրքիր դիտարկում վերաբերվում է փաստաթղթի ընդունման ժամանակ Արագածոտնի մարզպետարանի կողմից երկու ուշագրավ առաջարկություններին, որոնք չէին ընդունվել: Խոսքը վերաբերվում է.
 - մինչև երկու տարեկան երեխաների նպաստի կիրառման տարածմանը նաև ոչ աշխատող ծնողների վրա, և
 - լեռնային և սահմանամերձ տարածքներում նպաստների չափի տարբերակումը մնացած համայնքներում կիրառվողից.

Երկու առաջարկությունն էլ խիստ համահունչ են ԺՔԲ դրույթների հետ (խոսքը վերաբերվում է ոչ միայն գումարների թվայնացված ներկայացման, այլև այդ ուղղությամբ քաղաքականության ճշգրտման և լրամշակման մասին): Հետևաբար, թեև դրանց ֆինանսական արտահայտության մերժումը կոնկրետ տարվա ՄԺԾԾ կամ տարեկան բյուջեի հայտերի քննարկման ժամանակ կարող լինել տրամաբանական, պարզ չէ թե ինչու է նման դրույթը մերժվում ռազմավարության փաստաթղթից բխող միջոցառումների քննարկման ժամանակ: Հակառակ պարագայում ստացվում է, որ ռազմավարության միջոցառումների ցանկը լիովին պետք է կրկնի արդեն իսկ կայացված բյուջետային որոշումները, իսկ այդ պարագայում պարզ չէ որևիցե ոչ-բյուջետային միջոցառումների պլանավորման և կառավարության կողմից հաստատման անհրաժեշտությունը:

Առանձնացված խնդիրներ

- ԺՔԲ 2010թ. ծրագրի միջոցառումների ցանկի 7, 8 և 9-րդ միջոցառումները, իրենց ներկայիս խմբագրությամբ, ըստ էության, իմաստազուրկ են: Անտրամաբանական է գործողությունների ծրագրում ամրագրել «յուրաքանչյուր տարի նպաստների գումարների հաստատման» միջոցառումը, քանզի այն բխում է բյուջետային գործընթացի անհրաժեշտությունից: Ներկայիս բովանդակությամբ միջոցառման ամրագրումը չի պարունակում որևիցե կառուցողական արժեք ոչ ԺՔԲ փաստաթղթին, ոչ էլ առավելապես բյուջետային գործընթացի շամանակ որոշումների կայացման համակարգին: ԺՔԲ-ում և իրենից բխող տարեկան միջոցառումների ցանկում կարելի ամրագրել դինամիկ պատկերին վերաբերող դրույթներ (օրինակ՝ նպաստի պարբերական/ամենամյա/միջնաժամկետ/հեռահար աճի անհրաժեշտությունը: Հետաքրքրական է, որ ուսումնասիրելով այդ փաստաթղթի նախնական տարբերակի վերաբերյալ գերատեսչությունների առաջարկությունները ու դիտողությունները պարզվում է, որ նախնական տարբերակը (ինչպես նաև ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը) ավելի տրամաբանական բովանդակությամբ էր շարադրված: Այս դրույթի վերաբերյալ դիտարկումը թղթակցում է ստորև ներկայացվող «ընդհանուր բնույթի խնդիրներ» մասում զետեղված տեղեկատվության

հետ, ուստի, առաջարկվում է այն դիտարկել ընդհանուր լուծումների տրամաբանության լույսի ներքո⁷:

- ԺՔՌ միջոցառումների ցանկը և բյուջետային դասակարգումները լիովին համահունչ չեն – անհրաժեշտ է մշակել փոխկապակցվածության աղյուսակ, ինչը կհետաքննի վերլուծությունների իրականացումը: Սա վերաբերվում է նաև այն հանգամանքին, որ թեև ԺՔՌ, ընդհանուր առմամբ, կրում է «ծրագրային» ձևաչափ, սակայն այն բյուջետային դասակարգման տեսանկյունից կրում է բազմա-ուղորտային (միջուղորտային) բնույթ, ուստի և այս տեսանկյունից էլ համահունչ չէ բյուջետային դասակարգումներին: Այս ամենը լացուցիչ տեխնիկական խոչընդոտ է հանդիսանում թե՛ որոշումների կայացման ու բյուջե խտեգրելու տեսանկյունից և թե՛ հետադարձ դիտարկումների, ծրագրերի արդյունավետության հաշվետվությունների և վերլուծությունների իրականացման համար: Որպեսզի նշված բարդությունները հաղթահարվեն, անհրաժեշտ է ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության գերակայությունները ու ծրագրերը/միջոցառումները առավել համահունչ սարքել բյուջետային համակարգում կիրառվող դասակարգումներին (գործառնական և ծրագրային դասակարգումներին): Այնուհետև միայն, ներկայացնել ռազմավարությունը՝ նպատակներով, ցուցանիշներով և ծրագրային դրույթներով հանդերձ:

2011թ. բյուջեի նախագծի և ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2010թ. պետական ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկի համանունը լինելու ամփոփ գնահատական

Ընդհանուր առմամբ, այս հաշվետվության մշակման ընթացքում դիտարկման արդյունքում ձևավորվում է եզրակացություն, որ, որոշ (թեև կարևոր) բացառություններով հանդերձ, ժողովրդագրական ռազմավարությունից բխող միջոցառումների ցանկի 2011թ. պետական բյուջեի նախագծի հատկացումներին համահունչ լինելու աստիճանը ցածր է: Ժողովրդագրական խնդիրներին առնչվող բյուջետային որոշումների մեջ մեծ թիվ են կազմում ԺՔՌ հետ ոչ փոխկապակցված և, որոշակի առումով, չեզոք որոշումները: Բյուջետային հատկացումների դրական փոխկապակցվածության որոշ դիտարկումների ժամանակ ֆինանսական հատկացումները հաճախակի կրում են արձագանքող, բայց ոչ նախաձեռնողական բնույթ: Իսկ որոշ այն դեպքերում, երբ անգամ նկատվում է նախաձեռնող և համահունչ լինելու փաստը, այնուամենայնիվ, առաջ են գալիս դրանց ոչ կայուն և ոչ երկարաժամկետ բնույթի լինելու վարկածները, քանի որ դրանք մեծ հավանականությամբ կարող են պայմանավորված լինել ժողովրդագրական խնդիրների հետ ուղղակի կապ չունեցող հանգամանքներ հետ: Իսկ որոշ խիստ կարևոր դեպքերում նկատվում է անգամ հստակ անհամահունչ լինելու փաստը:

⁷ Հարկ է նշել, որ սույն դիտարկումը ամենևին չի առաջարկում յուրաքանչյուր տարեկան միջոցառումների ցանկում հստակ ամրագրել թվայնացված ցուցանիշներ, քանի որ դա կմիջամտի բյուջետային գործընթացում կիրառվող գործիքների արդյունավետ օգտագործմանը: Սակայն, ռազմավարական փաստաթղթերում անհրաժեշտ է ներկայացնել հեռահար նպատակադրումը (նաև թվայնացված) և այդ նպատակների հասնելու ուղենիշային դրույթները: Իսկ, տարեկան նպատակդրումները և հստակ սահմանաչափերը պետք է քննարկվեն և ֆիքսվեն բյուջետային գործիքակազմի կիրառմամբ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տարվա ֆիսկալ պարամետրերը:

Հավելվածներ

Հավելված Ա. ՄԺԾԾ-Բյուջե ստանդարտ ժամանակացույց

Գործողություն	Ժամկետ
Միջնաժամկետ ֆիսկալ սկզբունքների և գերակայությունների սահմանում	Դեկտեմբեր-Հունվար (եռամյա ժամանակահատվածին նախորդող տարվա)
ՄԺԾԾ հայտերի ներկայացում (նոր նախաձեռնությունների ներկայացման համար ամենակարևոր փուլ)	Փետրվար
ՄԺԾԾ հայտերի, ծրագրերի և գերակայությունների քննարկում գերատեսչությունների և որոշում ընդունողների միջև	Մարտ-Ապրիլ
Ոլորտային չափաքանակների (եռամյա ֆինանսական առաստաղների) սահմանում	Ապրիլ-Մայիս
ՄԺԾԾ վերջնական փաստաթղթի ընդունում և ներկայացում Ազգային ժողով	Հունիս
Բյուջետային հայտերի կազմում	Օգոստոս
Տարեկան բյուջեյի նախագծի ներկայացում ԱԺ	Հոկտեմբերի սկիզբ
ԱԺ կողմից նախագծի ուսումնասիրություն, քննարկում, առաջարկությունների ներկայացում	Նոյեմբերի սկիզբ
Բյուջեի օրենքի ընդունում	Նոյեմբերի վերջ

Հավելված Բ. Նոր նախաձեռնությունների ներկայացման ամփոփ ձև

Պետական մարմնի անվանումը

Նշել հայրը նարկայացնող պետական մարմնի անվանումը: Այն դեպքերում երբ նոր նախաձեռնությունը առնչվում է տվյալ ոլորտի մի քանի մարմինների, ապա անհրաժեշտ է նշել համապատասխան գլխադասային պետական մարմնի անվանումը՝ այդ մասին կատարելով համապատասխան նշում:

Նախաձեռնության (առաջարկի) նկարագրությունը

Երկու-երեք նախադասությամբ ներկայացնել ֆինանսավորում պահանջող կապիտալ բնույթի նախաձեռնությունը: Նշել համապատասխան բյուջետային ծրագիրը և կողը, որին կդասվի տվյալ նախաձեռնությունը (ծրագիրը կամ միջոցառումը) հաստատվելու դեպքում:

Առաջանահերթությունը

Դասակարգել նոր նախաձեռնությունը ըստ վերջինիս առաջանահերթության (1 առաջնահերթ - 3 ոչ առաջնահերթ)՝ համեմատելով այն տվյալ պետական մարմնի ներկայացրած մյուս նոր նախաձեռնությունների հետ:

Ծախսերի վրա նոր նախաձեռնության ազդեցության գնահատականը

	(հազար դրամով)		
	2011թ.	2012թ.	2013թ.
Լրացուցիչ ընթացիկ ծախսեր			
Լրացուցիչ կապիտալ ծախսեր			
(Խնայողություններ/լրացուցիչ եկամուտներ)			
Զուտ ազդեցություն			

Առավելությունները

Համառոտ ներկայացնել նոր նախաձեռնության արդյունքում ակնկալվող հիմնական օգուտները: Այդ թվում ներկայացնել բացառություն, թե ինչպես կնպաստի տվյալ նախաձեռնությունը ՀՀ կառավարության գերակայությունների իրագործմանը:

Ծախսերի և գերակայությունների վերաբաշխմանը վերաբերող տեղեկություններ

Բացառել, թե ինչպես կծախսվի լրացուցիչ ֆինանսավորումը՝ հաստատվելու դեպքում: Համառոտ ներկայացնել տվյալ նախաձեռնության ֆինանսական գնահատականի հիմքում ընկած ենթադրությունները: Ներկայացնել ֆինանսավորման այլընտրանքային տարբերակները, ինչպես, օրինակ, տվյալ նախաձեռնությունը ոչ առաջնահերթ ծրագրերից միջոցները վերահատկացնելու միջոցով ֆինանսավորելու տարբերակը:

Քննարկումների արդյունքները

Նշել, թե որ կազմակերպությունների հետ են (եթե այդպիսիք կան) քննարկվել նոր նախաձեռնությունը և ինչպիսին են այդ քննարկման արդյունքները:

Հավելված Գ. ՀՀ Ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2010թ. պետական ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկ և 2011թ. պետական բյուջեի համապատասխանության ներկայացում

N	Միջոցառման անվանումը	2011 թ. բյուջեում համապատասխանությունը	Մեկնաբանություն
	Գերակայություն 1. Անհրաժեշտ տեղեկատվության ապահովում		
1	Հայաստանի Հանրապետության Ժողովրդագրական իրավիճակի մոնիտորինգ	Բյուջեի նախագծով սա չի դիտարկվում	Հատուկ բյուջետային ֆինանսավորման անհրաժեշտություն չկա: Կարող է իրականացվել է ԱՍՀՆ համապատասխան ստորաբաժանման կանոնադրական գործառույթներով:
2	ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի Ժողովրդագրական փորձաքննության իրականացում	Բյուջեի նախագծով սա չի դիտարկվում	Բյուջեի նախագծով սա չի դիտարկվում, սակայն կարող են պահանջվել միջոցներ: Ամեն դեպքում, նման միջոցառումը պետք է ամրագրվի նախարարության կատարողական պլանում
3	Ժողովրդագրական խնդիրների վերաբերյալ հետազոտությունների կազմակերպում	Բյուջեի նախագծով սա չի դիտարկվում	Կարող են պահանջվել միջոցներ: Ամեն դեպքում, նման միջոցառումը պետք է ամրագրվի նախարարության կատարողական պլանում
4	ՀՀ-ում Ժողովրդագրական իրավիճակի և Ժողովրդագրության ոլորտում տարվող պետական քաղաքականության վերաբերյալ տեղեկատվավերլուծական նյութերի տպագրում, 1 հեռուստահաղորդման պատրաստում, 1 ռադիո հաղորդման պատրաստում	Բյուջեի նախագծով սա չի դիտարկվում	Կարող են պահանջվել միջոցներ: Ամեն դեպքում, նման միջոցառումը պետք է ամրագրվի նախարարության կատարողական պլանում
5	Արտասահմանյան պետություններում Ժողովրդագրական խնդիրների լուծմանն ուղղված մեթոդների ուսումնասիրություն և լավագույն փորձի տեղայնացում	Բյուջեի նախագծով սա չի դիտարկվում	Բյուջեով արտացոլման անհրաժեշտություն չկա
6	Ժողովրդագրության ոլորտի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստում և որակավորման բարձրացում	Բյուջեի նախագծով սա չի դիտարկվում	Կարող են պահանջվել միջոցներ: Ամեն դեպքում, նման միջոցառումը պետք է ամրագրվի նախարարության կատարողական պլանում
	Գերակայություն 2. Ծնելիության մակարդակի բարձրացում		
7	Ընտանիքում ծնված առաջին և երկրորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի սահմանում	Անհամապատասխանություն	Գործառույթի իրականացումը ԺԲԴ համատեքստում տրամաբանորեն ենթադրում է նպաստի չափի ավելացում,

			սակայն դա տեղի չի ունեցել: Բյուջեի նախագծի միջ-գերատեսչական քննարկման արդյունքում, փաստորեն, ԺՔՌ հաշվի չի առնվել
8	Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափի սահմանում	Անհամապատասխանություն	Գործառույթի իրականացումը ԺՔՌ համատեքստում տրամաբանորեն ենթադրում է նպաստի չափի ավելացում, սակայն դա տեղի չի ունեցել: Բյուջեի նախագծի միջ-գերատեսչական քննարկման արդյունքում, փաստորեն, ԺՔՌ հաշվի չի առնվել
9	Ընտանիքում ծնված երրորդ և հաջորդ յուրաքանչյուր երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի սահմանում	Անհամապատասխանություն	Գործառույթի իրականացումը ԺՔՌ համատեքստում տրամաբանորեն ենթադրում է նպաստի չափի ավելացում, սակայն դա տեղի չի ունեցել: Բյուջեի նախագծի միջ-գերատեսչական քննարկման արդյունքում, փաստորեն, ԺՔՌ հաշվի չի առնվել
10	<<Հայաստանի Հանրապետությունում բնակարանային պայմանների բարելավման մասին>> ՀՀ օրենքի նախագծի փաթեթի մշակում	-	Օրենքի նախագծի մշակումը, ինքնին, բյուջետային նոր հատկացումների հետ հիմնականում առնչություն չունի, սակայն, կախված դրույթներից, կարող է ունենալ նաև լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտություն
11	"Երիտասարդներին՝ մատչելի բնակարան" պետական նպատակային ծրագրի իրականացում	Համապատասխանում է	Հաշվի առնելով, 2010թ. նոյեմբերին կառավարության կողմից ընդունված որոշումը առ այն, որ մարզերում երիտասարդ ընտանիքներին վարկավորումը տեղի ունենա առավել մատչելի եղանակով, ուստի սույն ծրագիրը համատեղվում է նաև 6-րդ գերակայության հետ: Հատկանշական է, որ այս ծրագրով ֆինանսավորման հիմնական բեռը պետական բյուջեում արտահայտվում է միայն արտոնյալ տոկոսադրույքների չափով:
12	Գործատուների կողմից աշխատանքային օրենսդրությամբ սահմանված նորմերի պահպանման նկատմամբ վերահսկողական մեխանիզմների կատարելագործում	Բյուջեի նախագծով սա չի դիտարկվում	Բյուջեով առանձին արտացոլման անհրաժեշտություն կարող է և չունենալ
13	Նախադպրոցական ծառայությունների ցանցի ընդլայնում	Համապատասխանում է	2011թ. բյուջեում առաջին անգամ նախատեսվում են նախադպրոցական խնամքի ծառայություններին ուղղակիորեն ուղղված բյուջետային հատկացումներ: Նախկինում դա իրականացվում էր համայնքներին պատվիրակված լիազորությունների սահմանում, սակայն, ամեն դեպքում թողնված էր յուրաքանչյուր համայնքի

			ներքին որոշման վրա: Այդ իսկ պատճառով էլ, նախկինում այդ ոլորտը գրեթե զարգացում չէր ապրում: Այժմ, փաստորեն, խոշոր ուշադրություն է դարձվում այս կարևոր նախաձեռնությանը և ակնկալվում է տարեց-տարի դրա զարգացում:
14	Հաշմանդամ անձանց շրջանում աղքատության և սոցիալական մեկուսացման հաղթահարման ծրագրերի մշակում	Որոշակիորեն արտացոլված է	2011թ. բյուջեի նախագծով նախատեսված է հաշմանդամներին հասարակություն ինտեգրելու նպատակով 2 նոր միջոցառում՝ հաշմանդամների աշխատանքային պայմանների հարմարեցման և աշխատանքային պրակտիկայի աջակցության ուղղություններով: Սակայն, այդ նոր նախաձեռնությունների կապը և ազդեցությունը ժողովրդագրական ցուցանիշների վրա հստակ ներկայացված չէ:
15	Սոցիալապես անապահով ընտանիքների սննդապահովման ծրագրերի և մարդասիրական օգնության կարգով ստացվող պարենամթերքի բաշխման ծառայությունների իրականացում	Արտացոլված է բյուջեում, սակայն համապատասխանության աստիճանը ցածր է	Թեև մարդասիրական և սննդապահովման գծով բյուջետային հատկացումներ նախատեսված են, ամեն դեպքում հասկանալի չէ թե որքանով է սա թղթակցում ԺՔՌ 2010թ. ծրագրի միջոցառումների ցանկի հետ, քանի որ մարդասիրական օգնության ծրագիրը գոյություն ուներ նաև մինչ ԺՔՌ մշակումը և դրա իրականացման ծավալների վրա ներքին որոշումների ազդեցությունը չի դիտարկվում: Ընդհանուր առմամբ, անապահով ընտանիքների սննդապահովման հարցում պետական բյուջեով նախատեսված են ուղղակի և անուղղակի ազդեցությամբ բազմաթիվ ծրագրեր, որոնց մի մասի ծավալների աճը պայմանավորված է նաև հակաճգնաժամային միջոցառումներով: Ուստի, պատճառահետևանքային կապը ԺՔՌ հետ հստակ չի դիտարկվում:
	Գերակայություն 3. Մահացության մակարդակի նվազեցում		
16	Վաղաժամ մահվան առավել տարածված պատճառ հանդիսացող շաքարային դիաբետի, հիպերտոնիայի, չարորակ նորագոյացությունների, օստեոպորոզի վաղ	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Կապի հստակ դիտարկման բարդությունը կապված է բյուջետային ծրագրերի դասակարգման յուրահատկություններով: Ծախսերի կառուցվածքը և

	հայտնաբերման և կանխարգելման ծրագրերի իրականացում		դրանց ուսումնասիրությունը, այնուամենայնիվ, առկա է
17	Նորաձևային և վաղ հասակի երեխաների բժշկական սպասարկման ծառայությունների ուժեղացման ծրագրի իրականացում, վերակենդանացման սարքավորումներով և կադրերով հագեցում՝ հատկապես գյուղական բնակչության համար	Որոշակիորեն արտացոլված է	Ակնհայտ է հղիության, ծննդաբերության և երեխաների առողջապահության բնագավառում պետության կողմից հստակ և հետևողական քաղաքականության ամրագրումը բյուջետային որոշումներում
18	Հղիության ընթացքում պտղի բնածին արատների վաղ ախտորոշման և կանխարգելման ծրագրի իրականացում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Հստակ է այս միջոցառման փոխկապակցվածությունը առողջապահության ոլորտում հոշակված նպատակների և ծրագրերի իրականացման հետ (օրինակ հղիության և ծննդոգնության ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը բարձրացնելու նպատակով կիրառվող սերտիֆիկատների ներդրումը): Սակայն, այս կապը բյուջետային փաստաթղթերում հստակ չի դիտարկվում
19	Մտավոր և ֆիզիկական թերզարգացման և հաշմանդամության կանխարգելման միջոցառումների շրջանակներում նորաձևային սկրինինգ ծրագրերի իրականացում «Հ ողջ տարածքում, այդ թվում՝ -հիպոթիրեոզի -ֆենիլկետոնուրիայի -լսողության	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	-
20	Ծննդոգնության ծառայությունների մատչելիության և որակի բարելավում, ժամանակակից տեխնոլոգիաներով ու սարքավորումներով հագեցում	Համապատասխանում է	Հստակ է այս միջոցառման փոխկապակցվածությունը առողջապահության ոլորտում հոշակված նպատակների և ծրագրերի իրականացման հետ (օրինակ հղիության և ծննդոգնության ծառայությունների մատչելիությունը/հասանելիությունը բարձրացնելու նպատակով կիրառվող սերտիֆիկատների ներդրումը)
21	Նորաձևային ախտաբանությունների ներարգանդային ախտորոշման գործընթացի բարելավում, անտենատալ սկրինինգների ներդրում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Հավանաբար, այս միջոցառումը նույնպես արտացոլված է ֆինանսական հատկացումներում, սակայն դրա դիտարկումը բյուջետային փաստաթղթերում ակնհայտ չէ
22	Վաղաժամ մահացությունների հիմնական պատճառ հանդիսացող սիրտ-անոթային հիվանդությունների առաջացմանը նպաստող ռիսկի գործոնների նվազեցմանն ուղղված ծրագրերի իրականացում	Անհամապատասխանություն	Բյուջետային հատկացումների որոշակի աճը արձագանքող բնույթ է կրում, այլ ոչ նախաձեռնողական և հիմնականում ուղղված է հիվանդությունների բուժմանը

23	Մահացության սոցիալական պատճառների և դրանց կանխմանն ուղղված միջոցառումների (ներառյալ բժշկական) վերաբերյալ վերլուծական նյութերի պատրաստում և տպագրում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Հավանաբար, նման միջոցառման իրականացումը ուղղակիորեն կապված չէ բյուջետային հատկացումների հետ, ուստի անհրաժեշտ է ամրակցել նախարարության կատարողական պլանների հետ
	Գերակայություն 4. Բնակչության առողջության պահպանում և բարելավում		
24	Համավճարների սկզբունքով դեղերի հատկացման համակարգի ներդրում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	
25	Սպառողների առողջության համար սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի կատարելագործում, այդ բնագավառում միջազգային լավագույն փորձի տեղայնացում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Հավանաբար, նման միջոցառման իրականացումը ուղղակիորեն կապված չէ բյուջետային հատկացումների հետ, ուստի անհրաժեշտ է ամրակցել նախարարության կատարողական պլանների հետ
26	Ժամանակակից պերինատալ տեխնոլոգիաների, ստանդարտների մշակում և ներդրում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Հավանաբար, նման միջոցառման իրականացումը ուղղակիորեն կապված չէ բյուջետային հատկացումների հետ, ուստի անհրաժեշտ է ամրակցել նախարարության կատարողական պլանների հետ
27	Կանանց և տղամարդկանց անպտղության կանխարգելմանն ու բուժմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Հավանաբար, նման միջոցառման իրականացումը ուղղակիորեն կապված չէ բյուջետային հատկացումների հետ, ուստի անհրաժեշտ է ամրակցել նախարարության կատարողական պլանների հետ
28	Հղիների մոտ սեռավարակների թեստավորում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	-
29	Հղիության արհեստական ընդհատման անվտանգության մակարդակի բարձրացում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Հաշվի առնելով այս խնդրի առավել հրատապությունը և կարևորությունը ժողովրդագրական իրավիճակի բարելավման հետ, հղիության արհեստական ընդհատման դեպքերի սոցիալ-տնտեսական, մշակութային, առողջապահական խնդիրների անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել (ներառյալ բյուջետային որոշումներում), ինչը 2011թ. բյուջեում չի դիտարկվում

⁸ Վերջին չորս տարիների ընթացքում ավելի քան 25%-ով աճ արհեստական ընդհատման, ընդ որում ամենաարագ աճը տեղի է ունեցել 15-19 տարեկան կանաց մոտ, տես ՀՀ ԱՎԾ «Կանայք և տղամարդիկ – 2010» հաշվետվություն, էջ. 29

30	Հանրապետությունում Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող ծախսարդյունավետ տեխնոլոգիաների ներդրում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Հավանաբար, նման միջոցառման իրականացումը ուղղակիորեն կապված չէ բյուջետային հատկացումների հետ, ուստի անհրաժեշտ է ամրակցել նախարարության կատարողական պլանների հետ
31	Հանրակրթական դպրոցներում առողջ ապրելակերպի դասընթացի ներդրում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	ՀՀ պետական բյուջեի փաստաթղթերում, որպես կանոն, չի ներկայացվում կրթական ծրագրերի բովանդակությունը
32	Ընտանիքի պլանավորման ծառայությունների ցանցի հզորացում, մատչելիության բարձրացում, ծառայություն մատուցող մասնագետների գիտելիքների բարձրացում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Առողջապահական ծրագրերին առնչվող բյուջետային որոշումների տեղեկատվության ուսումնասիրության ժամանակ հստակ կապ չի դիտարկվել
33	Առողջ ապրելակերպ քարոզող հեռուստառադիոհաղորդումների, թոքշոունների, կլոր սեղանների կազմակերպում, առողջ ապրելակերպին, անվտանգ սեռական կյանքին նվիրված բուկլետների, հանրամատչելի գրականության պատրաստում և հրատարակում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Բյուջեի նախագծում զետեղված չէ հստակ այս նպատակով բյուջետային որոշումների վերաբերյալ տեղեկատվություն
34	Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող ինֆեկցիոն հիվանդությունների՝ տուբերկուլյոզի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, սեռական ճանապարհով փոխանցվող այլ հիվանդությունների, մանկական կառավարվող ինֆեկցիաների կանխարգելում, անհրաժեշտ պատվաստումների և սկրինինգային հետազոտությունների իրականացում	Անհամապատասխանություն	Բյուջեի նախագծով այս ուղղություններով նախատեսված է կամ 2010թ. բյուջեի հատկացումների մակարդակ կամ աննշան ավելացում
35	Վերարտադրողական օրգանների չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերում և կանխարգելում՝ սպասարկման տարածքում բնակվող 30-60 տարեկան կանանց օնկոցիտոլոգիական հետազոտության իրականացում	Միջոցառումների ցանկը այս հոդվածը բյուջեի հետ չի կապակցում	-
36	Ֆիզիկական ակտիվության, առողջության և ակտիվ կենսակերպի ամրապնդմանը, անհատի ներդաշնակ զարգացմանը, աշխատունակության բարձրացմանը և երկարակեցությանը նպատակաուղղված զանգվածային միջոցառումների, մրցույթների կազմակերպում և իրականացում	Համապատասխանում է մասամբ	Նշված ուղղությամբ, ընդհանուր առմամբ, ծախսերը աճել են ոչ շեշտակի: Սակայն, բյուջեի նախագծում առկա են նոր նախաձեռնություններ, որոնք համահունչ են ԺԲՈ-ից բխող 2010թ. միջոցառումների ցանկի դրույթներին

37	Տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	-
38	"Կազմակերպություններում աշխատանքի հիգիենայի ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները հաստատելու մասին" ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում ՀՀ Կառավարություն	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	-
	Գերակայություն 5. Միգրացիոն գործընթացների կարգավորում		
39	Սահմանամերձ տարածքներից տեղահանված անձանց իրենց նախկին բնակության վայրեր վերադարձի աջակցությանն ուղղված ծրագրերի մշակում	Միջոցառումների ցանկը այս հոդվածը բյուջեի հետ չի կապակցում	-
40	Միջազգային աշխատաշուկային ՀՀ ինտեգրման նպատակով համապատասխան երկրների հետ միջպետական համաձայնագրերի կնքում	Միջոցառումների ցանկը այս հոդվածը բյուջեի հետ չի կապակցում	-
41	Բնակչության շրջանում տեղեկատվության տարածում անօրինական միգրացիայի և մարդկանց անօրինական փոխադրումների և վաճառքի (թրաֆիքինգի) վտանգների վերաբերյալ	Համապատասխանում է	Բյուջեում առկա են այս նպատակին ուղղակիորեն և անուղղակիորեն ծառայող միջոցառումներ: Առկա է նաև հատկացումների որոշակի աճ
42	Միգրացիոն տարբեր հոսքերի վերաբերյալ հետազոտությունների և հարցումների անցկացում, վերլուծությունների իրականացում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Հավանաբար, նման միջոցառման իրականացումը ուղղակիորեն կապված չէ բյուջետային հատկացումների հետ, ուստի անհրաժեշտ է ամրակցել նախարարության կատարողական պլանների հետ
	Գերակայություն 6. Տարածքների զարգացում և բնակչության տարածքային բաշխվածության անհամամասնության մեղմացում		
43	Մարզային զարգացման ծրագրերի մշակում	Միջոցառումների ցանկը այս հոդվածը բյուջեի հետ չի կապակցում	-

44	Համայնքի կողմից սոցիալական բնագավառում մատուցվող ծառայությունների կարողությունների գնահատում, համայնքներում բնակչության սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրերի մշակման կարողությունների զարգացում	Միջոցառումների ցանկը այս հոդվածը բյուջեի հետ չի կապակցում	-
45	Մարզային հիվանդանոցների վերանորոգման իրականացում, բժշկական կահույքի և ժամանակակից սարքավորումների ձեռքբերում	Միջոցառումների ցանկը այս հոդվածը բյուջեի հետ չի կապակցում	-
46	<< մարզերում մշակույթի զարգացման ապահովում	Համապատասխանում է մասամբ	Որոշ ծրագրերով ու միջոցառումներով հստակ դիտարկվում է դեպի մարզեր ծախսերի հարաբերական դեկոնցենտրացիա և բացարձակ արժեքի աճ: Այս դիտարկումը, սակայն, կիրառելի է որոշ, բայց ոչ բոլոր մշակութային ուղղություններով:
47	<<Թանգարան անիվների վրա>> և <<Շարժական գրադարան>> ծրագրերի իրականացում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	Հնարավոր է, որ բյուջետային որոշումները անդրադարձել են այս միջոցառմանը, սակայն դրա դիտարկումը բյուջետային ծրագրերի ներկա դասակարգմամբ հնարավոր չի
48	Գյուղական և սահմանամերձ բնակավայրերում բնակվող հղի կանանց, երիտասարդ մայրերի ու նորածինների համար որակյալ առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնում	Համապատասխանում է	Այս միջոցառումը փոխկապակցված է վերևում արդեն իսկ նշված հղիության և ծննդոգնության ծառայությունների, ինչպես նաև հետագայում երեխաներին առողջապահական ծրագրերի նկատմամբ բյուջեի նախագծի հստակ դրական ուղղվածության մասին
Գերակայություն 7. Հոգևոր (ոչ նյութական) մշակութային արժեքների պահպանություն և պաշտպանություն			
49	Ազգային խաղերի մրցույթների կազմակերպում	Համապատասխանում է մասամբ	Բյուջեի նախագծով դիտարկվում է ընդհանուր ոլորտին տրամադրվող հատկացումների աննշան աճ: Սակայն, հստակ դիտարկվում են նաև ԺԲՌ տարեկան միջոցառումների ցանկին համահունչ նպատակաուղղվածությամբ նոր նախաձեռնություններ
50	Ժողովրդական արհեստագործներին պետական աջակցության տրամադրում	Բյուջեի նախագծով կապը հստակ չի դիտարկվում	-
51	Ժողովրդական արհեստագործական հմտություններին	Բյուջեի նախագծով	-

	վերաբերող ուսումնական, խորհրդատվական, օժանդակ ձեռնարկների կազմում և հրատարակում	կապը հստակ չի դիտարկվում	
--	---------------------------------------------------------------------------------	--------------------------	--

Նշումներ. Այս հավելվածում տեղ գտած դիտարկումները ու մեկնաբանությունները կրում են ընդհանրական բնույթ և կիրառելի են միայն սույն հաշվետվության ենթատեքստում՝ ԺՔՌ և 2011թ. բյուջեի նախագծի հատկացումների համապատասխանելիության մոտարկված գնահատականի բնույթ:

	Կարմիր գույնով ներկայացվում են նշված փաստաթղթերի դրույթների անհամապատասխանության դեպքերը
	Դեղին գույնով ներկայացվում են նշված փաստաթղթերի դրույթների համապատասխանության վերաբերյալ գնահատականի անհնարության կամ ոչ կիրառելի լինելու դեպքերը
	Կանաչ գույնով ներկայացվում են նշված փաստաթղթերի դրույթների համապատասխանության դեպքերը

Հավելված Դ. ՀՀ առողջապահության բնագավառի 2009-2011 թթ. ծախսերի համեմատությունը

հազար դրամ	2009թ. փաստացի	2010թ. հաստատված բյուջե	2011թ. նախագիծ	2011թ. բյուջեի նախագծի աճի (նվազման) տոկոսը	
				2009թ. փաստացիի նկատմամբ	2010թ. հաստատված բյուջեի նկատմամբ
1	2	3	4	5	6
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, այդ թվում՝	54,759,670.0	54,210,042.5	61,453,089.0	12.2	13.4
Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ, այդ թվում՝	3,144,564.1	3,687,525.1	3,687,525.1	17.3	0.0
Դեղագործական ապրանքներ, այդ թվում՝	3,045,426.1	3,687,525.1	3,687,525.1	21.1	0.0
1. Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական-հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց, այդ թվում՝	3,044,311.3	3,686,410.0	3,686,410.0	21.1	0.0
ՀՀ առողջապահության նախարարություն	2,943,801.3	3,585,900.0	3,585,900.0	21.8	0.0
ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	73,710.0	73,710.0	73,710.0	0.0	0.0
ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն	26,800.0	26,800.0	26,800.0	0.0	0.0
2. Դեղորայքի տրամադրում պետական պահպանության ծառայությանը	1,114.8	1,115.1	1,115.1	0.0	0.0
ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության պետական պահպանության ծառայություն	1,114.8	1,115.1	1,115.1	0.0	0.0
Բժշկական սարքեր և սարքավորումներ, այդ թվում՝	99,138.0			-100.0	
1. Ներդրումներ առողջապահական կազմակերպություններում բժշկական սարքավորումների և շտապ օգնության մեքենաների ձեռքբերման համար	99,138.0			-100.0	
ՀՀ առողջապահության նախարարություն	99,138.0			-100.0	
Արտահիվանդանոցային ծառայություններ, այդ թվում՝	20,431,489.6	21,033,326.0	23,884,423.4	16.9	13.6
Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ, այդ թվում՝	7,872,962.8	8,048,313.8	8,791,970.6	11.7	9.2
1. Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ	7,872,962.8	8,048,313.8	8,791,970.6	11.7	9.2
ՀՀ առողջապահության նախարարություն	7,872,962.8	8,048,313.8	8,791,970.6	11.7	9.2
Մասնագիտացված բժշկական ծառայություններ, այդ թվում՝	5,055,919.0	5,337,113.7	58,019,755.0	14.8	8.7

հազար դրամ	2009թ. փաստացի	2010թ. հաստատված բյուջե	2011թ. նախագիծ	2011թ. բյուջեի նախագծի աճի (նվազման) տոկոսը	
				2009թ. փատոացիի նկատմամբ	2010թ. հաստատվա ծ բյուջեի նկատմամբ
1. Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ	2,440,577.0	2,615,433.1	2,862,238.1	17.3	9.4
ՀՀ առողջապահության նախարարություն	2,440,577.0	2,615,433.1	2,862,238.1	17.3	9.4
2. Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	1,040,204.6	1,171,850.2	1,298,898.8	24.9	10.8
ՀՀ առողջապահության նախարարություն	1,040,204.6	1,171,850.2	1,298,898.8	24.9	10.8
3. Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ	158,979.7	142,000.0	142,000.0	10.7	0.0
ՀՀ առողջապահության նախարարություն	158,979.7	142,000.0	142,000.0	10.7	0.0
4. Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	11,962.4	11,702.5	11,702.5	-2.2	0.0
ՀՀ առողջապահության նախարարություն	11,962.4	11,702.5	11,702.5	-2.2	0.0
5. Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ	128,000.0	128,000.0	128,000.0	0.0	0.0
ՀՀ առողջապահության նախարարություն	128,000.0	128,000.0	128,000.0	0.0	0.0
6. Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններ	64,789.2	66,251.7	71,411.6	10.2	7.8
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	64,789.2	66,251.7	71,411.6	10.2	7.8
7. Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ	1,211,406.1	1,201,876.2	1,287,724.5	6.3	7.1
ՀՀ առողջապահության նախարարություն	1,211,406.1	1,201,876.2	1,287,724.5	6.3	7.1
Ստոմատոլոգիական ծառայություններ, այդ թվում՝	826,046.0	837,713.0	840,020.6	1.7	0.3
1. Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ	736,617.9	744,704.6	744,704.6	1.1	0.0
ՀՀ առողջապահության նախարարություն	736,617.9	744,704.6	744,704.6	1.1	0.0
2. Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ	89,428.1	93,008.4	95,316.0	6.6	2.5
ՀՀ առողջապահության նախարարություն	89,428.1	93,008.4	95,316.0	6.6	2.5
Պարաբժշկական ծառայություններ, այդ թվում	66,765,617.0	68,099,855.0	8,450,456.7	26.6	24.1
Լաբորատոր-գործիքային փխտորոշիչ հետազոտություններ	2,710,004.6	2,743,223.0	2,843,027.7	4.9	3.6
ՀՀ առողջապահության նախարարություն	2,710,004.6	2,743,223.0	2,843,027.7	4.9	3.6
2. Շտապ բժշկական օգնության ծառայություններ	1,475,518.7	1,466,426.5	2,986,870.3	102.4	103.7
ՀՀ առողջապահության նախարարություն	1,475,518.7	1,466,426.5	2,986,870.3	102.4	103.7

հազար դրամ	2009թ. փաստացի	2010թ. հաստատված բյուջե	2011թ. նախագիծ	2011թ. բյուջեի նախագծի աճի (նվազման) տոկոսը	
				2009թ. փատոացիի նկատմամբ	2010թ. հաստատվա ծ բյուջեի նկատմամբ
3. Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ	2,491,038.4	2,600,336.0	2,620,558.7	5.2	0.8
ՀՀ առողջապահության նախարարություն	2,491,038.4	2,600,336.0	2,620,558.7	5.2	0.8
Հիվանդանոցային ծառայություններ, այդ թվում՝	21,606,232.4	21,198,383.3	27,370,937.6	26.7	29.1
Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ, այդ թվում՝	5,624,055.3	59,843,435.0	6,732,352.3	19.7	12.5
1. Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններ	3,295,246.7	3,481,987.6	3,831,758.5	16.3	10.0
ՀՀ առողջապահության նախարարություն	3,295,246.7	3,481,987.6	3,831,758.5	16.3	10.0
2. Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ	2,328,808.6	2,502,555.9	2,900,593.8	24.6	15.9
ՀՀ առողջապահության նախարարություն	2,328,808.6	2,502,555.9	2,900,593.8	24.6	15.9
Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ, այդ թվում՝	6,300,684.8	6,030,927.9	6,995,640.6	11.0	16.0
1. Տուբերկուլոզի բժշկական օգնության ծառայություններ	1,209,897.3	1,186,140.3	1,304,956.0	7.9	10.0
ՀՀ առողջապահության նախարարություն	1,209,897.3	1,186,140.3	1,304,956.0	7.9	10.0
2. Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	716,928.5	688,009.8	1,117,863.7	55.9	62.5
ՀՀ առողջապահության նախարարություն	716,928.5	688,009.8	1,117,863.7	55.9	62.5
3. Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	162,661.3	154,663.8	170,130.1	4.6	10.0
ՀՀ առողջապահության նախարարություն	162,661.3	154,663.8	170,130.1	4.6	10.0
4. Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ	1,675,725.4	1,619,869.6	1,786,155.4	6.6	10.3
ՀՀ առողջապահության նախարարություն	1,675,725.4	1,619,869.6	1,786,155.4	6.6	10.3
5. Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	959,696.6	940,642.6	1,035,264.8	7.9	10.1
ՀՀ առողջապահության նախարարություն	959,696.6	940,642.6	1,035,264.8	7.9	10.1
6. Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ	569,039.6	561,328.6	561,517.6	-1.3	0.0
ՀՀ առողջապահության նախարարություն	569,039.6	561,328.6	561,517.6	-1.3	0.0
7. Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայություններ	1,006,736.2	878,073.2	1,017,553.0	1.1	15.9

հազար դրամ	2009թ. փաստացի	2010թ. հաստատված բյուջե	2011թ. նախագիծ	2011թ. բյուջեի նախագծի աճի (նվազման) տոկոսը	
				2009թ. փատոացիի նկատմամբ	2010թ. հաստատվա ծ բյուջեի նկատմամբ
ՀՀ առողջապահության նախարարություն	1,006,736.2	878,073.2	1,017,553.0	1.1	15.9
8. Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ	0.0	2,200.0	2,200.0		0.0
ՀՀ առողջապահության նախարարություն	0.0	2,200.0	2,200.0		0.0
Բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայություններ, այդ թվում	9,681,492.3	9,183,111.9	13,642,944.7	40.9	48.6
1. Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ	5,872,552.6	5,697,049.9	6,858,815.8	16.8	20.4
ՀՀ առողջապահության նախարարություն	5,872,552.6	5,697,049.9	6,858,815.8	16.8	20.4
2. Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ	362,009.4	359,944.6	396,128.9	9.4	10.1
ՀՀ առողջապահության նախարարություն	362,009.4	359,944.6	396,128.9	9.4	10.1
3. Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ	3,446,930.3	3,126,117.4	6,388,000.0	85.3	104.3
ՀՀ առողջապահության նախարարություն	3,446,930.3	3,126,117.4	6,388,000.0	85.3	104.3
Հանրային առաջապատեական ծառայություններ, այդ թվում	28,536,107.0	2,796,361.1	2,961,068.6	3.8	5.9
Հանրային ստողջապահական ծառայություններ, այդ թվում	2,853,610.7	2,796,361.1	2,961,068.6	3.8	5.9
1. Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ	1,868,425.0	1,814,627.9	1,814,627.9	-2.9	0.0
ՀՀ առողջապահության նախարարություն	1,868,425.0	1,814,627.9	1,814,627.9	-2.9	0.0
2. հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություններ	205,647.5	202,656.0	202,656.0	-1.5	0.0
ՀՀ առողջապահության նախարարություն	205,647.5	202,656.0	202,656.0	-1.5	0.0
3. Իմունականխարգելման ազգային ծրագիր	150,000.0	190,000.0	230,000.0	53.3	21.1
ՀՀ առողջապահության նախարարություն	150,000.0	190,000.0	230,000.0	53.3	21.1
4. Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայություններ	250,463.5	215,429.8	228,846.3	-8.6	6.2
ՀՀ առողջապահության նախարարություն	250,463.5	215,429.8	228,846.3	-8.6	6.2
5. ՄԻՎՎ/ՉԻՍՎ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ	112,938.4	112,938.4	112,938.4	0.0	0.0
ՀՀ առողջապահության նախարարություն	112,938.4	112,938.4	112,938.4	0.0	0.0
6. Վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայություններ	66,700.0	60,700.0	60,700.0	-9.0	0.0
ՀՀ առողջապահության նախարարություն	66,700.0	60,700.0	60,700.0	-9.0	0.0
7. Արյան հավաքագրման ծառայություններ	199,436.3	200,009.0	211,300.0	5.9	5.6

հազար դրամ	2009թ. փաստացի	2010թ. հաստատված բյուջե	2011թ. նախագիծ	2011թ. բյուջեի նախագծի աճի (նվազման) տոկոսը	
				2009թ. փաստացիի նկատմամբ	2010թ. հաստատված բյուջեի նկատմամբ
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	199,436.3	200,009.0	211,300.0	5.9	5.6
8. Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագիր			100,000.0		
<i>ՀՀ նախագահի աշխատակազմ</i>			100,000.0		
Առողջապահություն (այլ դասերին չպատկանող), այդ թվում	6,723,773.3	5,494,247.0	3,349,134.3	-47.2	-35.4
Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր, այդ թվում՝	6,723,773.3	5,494,247.0	3,349,134.3	-47.2	-35.4
1. Դատաբժշկական և գենետիկ ծառայություններ	340,000.0	315,000.0	330,861.6	-2.7	5.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	340,000.0	315,000.0	330,861.6	-2.7	5.0
2. Պաթանատոմիական ծառայություններ	39,494.7	38,268.0	38,268.0	-3.1	0.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	39,494.7	38,268.0	38,268.0	-3.1	0.0
3. Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհաձախսի փոխհատուցում	37,785.0	40,365.0	40,365.0	6.8	0.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	37,785.0	40,365.0	40,365.0	6.8	0.0
4. Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ	413,105.7	395,500.0	395,500.0	-4.3	0.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	413,105.7	395,500.0	395,500.0	-4.3	0.0
5. Դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայություններ	20,000.0	20,000.0	20,000.0	0.0	0.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	20,000.0	20,000.0	20,000.0	0.0	0.0
6. Հաշմանդամ երեխաների պրոթեզների և կորսետների պատրաստման ծառայություններ	94,000.0	81,811.0	81,811.0	-13.0	0.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	94,000.0	81,811.0	81,811.0	-13.0	0.0
7. Առողջապահության համակարգի զանգվածային տեղեկատվության ծառայություններ	68,307.7	80,000.0	80,000.0	17.1	0.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	68,307.7	80,000.0	80,000.0	17.1	0.0
8. Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններ	45,977.4	40,000.0	40,000.0	-13.0	0.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	45,977.4	40,000.0	40,000.0	-13.0	0.0
9. Այլ բուժօգնության և սպասարկման ծառայություններ	15,000.0	15,000.0	15,000.0	0.0	0.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	15,000.0	15,000.0	15,000.0	0.0	0.0

հազար դրամ	2009թ. փաստացի	2010թ. հաստատված բյուջե	2011թ. նախագիծ	2011թ. բյուջեի նախագծի աճի (նվազման) տոկոսը	
				2009թ. փատոացիի նկատմամբ	2010թ. հաստատվա ծ բյուջեի նկատմամբ
10. Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արաադրանքի ստացման– մաքսազերծման և բաշխման աշխատանքներ	40,000.0	40,000.0	40,000.0	0.0	0.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	40,000.0	40,000.0	40,000.0	0.0	0.0
11. Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիր	40,000.0	57,159.3	92,000.0	130.0	61.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	40,000.0	57,159.3	92,000.0	130.0	61.0
12. ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններ բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման ծախսերի փոխհատուցման ծրագիր		50,229.9	50,229.9		0.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>		50,229.9	50,229.9		0.0
13. Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների և սուբվենցիաների տրամադրում	39,642.6			-100.0	
<i>ՀՀ Լոռու մարզպետարան</i>	39,642.6			-100.0	
14. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում	307,467.5			-100.0	
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	183,341.2			-100.0	
<i>ՀՀ Վայոց ձորի մարզպետարան</i>	124,126.3			-100.0	
15. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման ծրագիր	1,386,570.7	183,583.3		-100.0	-100.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	1,386,570.7	183,583.3		-100.0	-100.0
16. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագիր	3,274,866.8	3,859,926.9	2,238,565.1	-31.6	-42.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	3,274,866.8	3,859,926.9	2,238,565.1	-31.6	-42.0
17. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագիր	36,813.2	12,249.2		-100.0	-100.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	36,813.2	12,249.2		-100.0	-100.0
18. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիր	89,490.3	70,326.6	86,533.7	-3.3	23.0
<i>ՀՀ կառավարության աշխատակազմ</i>	89,490.3	70,326.6	86,533.7	-3.3	23.0

հազար դրամ	2009թ. փաստացի	2010թ. հաստատված բյուջե	2011թ. նախագիծ	2011թ. բյուջեի նախագծի աճի (նվազման) տոկոսը	
				2009թ. փատոացիի նկատմամբ	2010թ. հաստատվա ծ բյուջեի նկատմամբ
19. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թոշնագրիային հակազդելու ծրագիր	59,462.0	160,398.8		-100.0	-100.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	59,462.0	160,398.8		-100.0	-100.0
20. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թոշնագրիային հակազդելու ճապոնական դրամաշնորհային ծրագիր	22,460.8	34,429.0		-100.0	-100.0
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	22,460.8	34,429.0		-100.0	-100.0
21. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Թոշնագրիային հակազդելու ծրագրի համաֆինանսավորման ճապոնական դրամաշնորհային ծրագիր	353,329.0			-100.0	
<i>ՀՀ առողջապահության նախարարություն</i>	353,329.0			-100.0	